

DOI: 10.57192/18291864-2023.1-36

Արարատ Մ. Հակոբյան

Պատմ. գիտ. դոկտոր

ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ՀՈԼՈՎՈՒՅԹՆ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ազգային սահմանադրության վավերացման
160-ամյակի առթիվ^{*}

Բանալի բառեր – Սահմանադրություն, Ազգային ժողով, պատրիարք, 9-րդ հոդված, սուլթան Աբդուլ Մեջիդ, վավերացում, Ն. Ռուսինյան, Բարձր Դուռ, 1860 թ. մայիսի 24, 1863 թ. մարտի 17, Թուրքիա, Կ. Պոլիս, գավառ, ընտրություններ, պատգամավոր, «Թանգիմաթ»:

Մուտք

Արևմտահայոց Ազգային սահմանադրության ընդունման **ներքին** ազդակը Օսմանյան կայսրության ռազմաքաղաքական ու տնտեսական բարդ իրավիճակն էր և հայության հասարակական կյանքի աշխուժացումը, իսկ **արտաքին** ազդակը՝ եվրոպական տերությունների ավելի ու ավելի ընդլայնվող ռազմաքաղաքական և տնտեսական ներթափանցումը, ինչը ստիպեց Բարձր Դռանը գնալ ոչ մահմեդական ազգերի կառավարչական, կրթալուսավորական, ազգային-մշակութային կյանքի կանոնադրական չափավոր կարգավորումների:

Խոսելով արևմտահայ սահմանադրական շարժման գաղափարական ակունքների մասին՝ հարկ է հիշել 19-րդ դարի կեսերին Եվրոպայում կրթություն ստացած նոր սերնդի գործունեությունը և Մ. Նալբանդյանի՝ Կ. Պոլիսի արևմտահայ հասարակական շրջանակների հետ ունեցած կապերը: Նրանց ջանքերով սկիզբ էր առել գաղափարական շարժում թե՛ արևմտահայության և թե՛ արևելահայության շրջանում:

^{*} Հոդվածն ընդունվել է տպագրության 17.03.2022:

Արևմտահայ իրականության մեջ այդ շարժման առաջնորդությունը ստանձնեց «սահմանադրական երիտասարդությունը»¹ Նիկ. Պալյան, Ն. Ռուսինյան, Գր. Օտյան և ուրիշներ, որոնք հոգևոր սնունդ էին ստացել 1848-1849 թթ. եվրոպական հեղափոխություններից: Բնականաբար, խոսքը վերաբերում էր արևմտահայերի մտավոր կենտրոն Կ. Պոլսին (Ստամբուլ), մասամբ՝ նաև Զմյուռնիային (Իզմիր), իսկ արևմտահայ գավառը հասկանալիորեն թույլ էր արձագանքում դրան:

Մեր ազատության մեծ երգիչ Մ. Նալբանդյանի կարձ, սակայն բեղուն քաղաքական գործունեությունն առնչվեց նաև 19-րդ դ. 50-60-ական թթ. արևմտահայ սահմանադրական շարժմանը: Հենց այդ շարժման բուռն շրջանում՝ 1861-1862 թթ., բանաստեղծը երկու անգամ եղավ Կ. Պոլսում՝ մի հնդկահայ բարերարի՝ Նոր Նախիջևանի կրթական կենտրոնների համար կտակի գործերով Հնդկաստան (Կալկաթա) ուղևորվելու ճանապարհին:

Դեպքերի բերումով Մ. Նալբանդյանի այցը համընկավ 1860 թ. մայիսի 24-ին Կ. Պոլսում **Ազգային սահմանադրության** հրապարակման հետ: Արևմտահայ սահմանադրական շարժմանը մեծ ուժ հաղորդեց հատկապես Զեյթունի՝ 1862 թ. իր թափով աննախադեպ ապստամբությունը: Ինքնավար կյանքի ձգտման առումով հատկանշելի էր Կիլիկիայի հայկական այդ ըմբոստ լեռնագավառում կիսանկախ ու ինքնավար կեցության որոշակի տարրերի առկայության փաստը:

1. «Թանգլիմաթը» և սահմանադրական շարժման սկիզբը

Օսմանյան կայսրությունում 19-րդ դ. 30-60-ական թթ. որոշ տեղաշարժեր նկատվեցին, որոնց դրսևորումներից էր «**Թանգլիմաթը**» (արաբերեն՝ «կարգավորում» կամ «բարենորոգում»): Թուրքիայի **արևմտականացմանն** ուղղված այս բարենորոգչական շարժումը ձևավորվեց 19-րդ դ. 30-50-ական թվականներին՝ **ներքին** ու **արտաքին** ազդակներով պայմանավորված խոր ճգնաժամի թելադրանքով²:

Ժամանակագրական առումով «Թանգլիմաթը» ընդգրկել է երկու փուլ՝ 1839-1856 թթ. և 1856-1876 թթ., ու ավարտվել 1876 թ. կիսակա-

1 Լեո, Երկերի ժողովածու, հատ. 6, Եր., «Հայաստան» հրատ., 1987, էջ 149:

2 Թուրքիայի վիճակն առավել բարդացավ, երբ 1839 թ. հունիսին սուլթան Մահմուդ 2-րդի գործը Հյուսիսային Սիրիայում պարտություն կրեց Եգիպտոսի փոխարքա Մուհամեդ-Ալի փաշայից: Դրան հետևեց հիվանդ սուլթանի մահը, և գահն անցավ նրա որդուն՝ երիտասարդ ու եռանդուն Աբդուլ Մեջիդին:

տար սահմանադրության ընդունմամբ³: Ավելի ստույգ՝ այն սկսվեց սուլթան Աբդուլ Մեջիդի (1839–1861) կողմից 1839 թ. նոյեմբերի 3-ի «Գյուլհանեի Հաթթը շերիֆ»⁴ հրովարտակի հրապարակմամբ, որի իրական հեղինակը սուլթանի խորհրդական Մուսթաֆա Ռեշիդ փաշան էր: Հրովարտակի մշակմանն ակտիվ մասնակցություն են ունեցել Ռեշիդ փաշայի հայագգի խորհրդական Հակոբ Կրճիկյանը (1806–1865), բժիշկ Հովսեփ Պեյրանը (1825–1866), պետական ծառայող Գրիգոր Աղաթոնը (1825–1868) և ուրիշներ: Կայսերական ապարանքի՝ Գյուլհանեի դահլիճում գումարված «Մեծ հանդեսի» ժամանակ պետական ու զինվորական ծառայողների, հոգևորականության, այդ թվում նաև՝ քրիստոնյա պատրիարքների, եվրոպական դեսպանների և այլոց ներկայությամբ հրապարակվեց «Թանգիմաթի» հրովարտակը կամ նվիրական գիրը:

Այդ հրովարտակում սուլթանական կառավարությունը մասնավորապես խոստանում էր՝ 1. ապահովել կայսրության բոլոր հպատակների կյանքի, պատվի և գույքի պաշտպանությունը՝ անկախ ցեղից, կրոնից ու աղանդից, 2. կանոնավորել հարկերն ու տուրքերը, դրանց բաշխումն ու գանձումն իրականացնել ըստ հարկատուի կարողության, 3. վերակառուցել բանակը, զինվորագրությունն ու զինծառայությունը, ինչպես նաև դատական և վարչական մարմիններում ապահովել իսլամ դավանող և չդավանող անձանց՝ օրենքով ընդունված կարգով ընդգրկումը, թույլատրել բանակում ծառայել բոլոր ազգերին և այլն⁵: Սուլթանական կառավարությունն այդ փաստաթղթում փորձել էր եվրոպական արժեհամակարգին բնորոշ գրավիչ բառամթերք օգտագործել, որպեսզի լավ տպավորություն ստեղծեր արևմտյան տերությունների շրջանում, որ նրանք չմիջամտեին իր երկրի ներքին գործերին: Մյուս կողմից՝ նման փաստաթղթի հրապարակ գալը, բնականաբար, որոշակի աշխուժություն և հույսեր առաջացրեց Կ. Պոլսի և Զմյուռնիայի հայ առաջադեմ մտավորականության շրջա-

3 Տե՛ս «Հայոց պատմություն», հատ. 3, գիրք 1, Եր., «Զանգակ-97» հրատ., 2010, էջ 284:

4 Թարգմանաբար մշակակում է «Վարդատան արքունի նվիրական հրովարտակ» (տես **Սարուխան Ա.**, Հայկական խնդիրն եւ Ազգային Սահմանադրութիւնը Թուրքիայում (1860-1910), հատ. Ա, Թիֆլիս, «Էպօխա» էլ. տպ., 1912, էջ 12):

5 Տե՛ս **Պեթպերեան Ա.**, Պատմութիւն Հայոց (սկսեալ ի 1772 ամէ փրկչին մինչեւ Յամն 1860), Կ. Պօլիս, տպ. «Պօղոսի Քիրիշճեան եւ ընկ.», 1871, էջ 499, **Օրմանեան Մ.**, Ազգապատում, հատ. Գ, մաս Ա, Պէյրուք, տպ. «Սեւան», 1961, էջ 3727, **Սիրունի Հ.**, Թանգիմաթ և հայեր, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 1966, N 4, էջ 55 և 59, **Լեո**, Երկերի ժողովածու, հատ. 4, Եր., «Հայաստան» հրատ., 1984, էջ 496, **Ղազարյան Հ.**, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Եր., Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 1967, էջ 236:

նում, որն ակնկալում էր հայ հանրության բովանդակ կյանքի բարվոքում: Սակայն կյանքից կտրված նման հրովարտակը թշնամաբար պիտի ընդունվեր թուրք հանրության կողմից, թե «Ինչպե՞ս հավասարութիւն կըրնա ըլլալ քրիստոնէա հպատակներուն և իսլամներուն միջեւ»⁶:

Որպէս արդյունք, տարիներով ձգձգվելով, այս հրովարտակն այդպէս էլ կյանքի չկոչվեց, քանզի չկար դրա համար անհրաժեշտ հետևողականություն: Այդ ամենով հանդերձ՝ 1840-ական թթ. թանգիմարթյան մթնոլորտում պոլսահայ համայնքի հասարակական, կառավարչական և ուսումնադպրոցական կյանքում որոշակի աշխուժություն ու տեղաշարժեր նկատվեցին: 1840-ական թվականներին (հատկապես 1844 թ. և 1847 թ.) որոշակի քայլեր ձեռնարկվեցին հայ համայնքի վրա պատրիարքի ու ամիրաների միահեծան իշխանությունը սահմանափակելու համար: Խնդիր դրվեց ժողովրդի ավելի մեծ զանգվածի մասնակից դարձնելու պատրիարքի ընտրություններին: Այդ առնչությամբ նախկին պատրիարք, ճանաչված պատմագիր Մաղաքիա արք. Օրմանյանը հետագայում պարզաբանում էր, որ ազգային-վարչական մարմինների դեկն ամիրաների ձեռքում էր այն պատճառով, որ նրանց քսակով էին ֆինանսավորվում պատրիարքարանը, ազգային հիվանդանոցը, վարժարանը, նոր կառույցների շինարարությունը և այլն⁷: Հարկ է նկատի առնել, որ Կ. Պոլսում կային ավելի քան 100 հազար հայ պանդուխտներ, որոնց ձայնը բնավ լսելի չէր: Ուստի նախ փորձ արվեց ընտրական ավելի լայն սկզբունքի հիման վրա հիմնելու ամիրաներից, սեղանավորներից (սարաֆ, բանկիր), արհեստապետներից (էսնաֆներ) և հոգևորականներից բաղկացած, կայսերական հրովարտակով հաստատված ներկայացուցչական մի մարմին՝ **Ազգային ժողով** կամ **Ընդհանուր ժողով**, որն ընդունված է եղել կոչել **Ազգային ընդհանուր ժողով**⁸: Ազգային կամ Ընդհանուր ժողովը պետք է ձևավորեր 20 անդամից կազմված **Գերագույն ժողովը**, որը պետք է վերահսկեր քաղաքական բնույթի գործերը, իսկ Գերագույն ժողովն իր հերթին ձևավորելու էր 14 եկեղեցականներից կազմված **Հոգևոր ժողովը**: Վերջինս էլ պետք է զբաղվեր հատկապես կրոնական գործերով: 1847 թ. կառավարութ-

6 Սիրունի Հ., նշվ. աշխ., էջ 56:

7 Տե՛ս Օրմանեան Ա., Ազգապատում, հատ. Գ, մաս Ա, էջ 3728-3729:

8 Ա. Սարուխանն ընտրովի այդ մարմինն անվանում է **Ազգային ժողով** (տե՛ս Սարուխան Ա., նշվ. աշխ., էջ 10), իսկ Հ. Շահրիկյանը՝ **Ընդհանուր ժողով** (տե՛ս Ասոմ, Ազգային Սահմանադրութիւնը, Կ. Պոլիս, 1914, էջ 33):

յունը վավերացնում է նման բովանդակություն ունեցող Ազգային կանոնադրությունը: Եվ դրանով կառավարչական հսկողության ղեկը գործնականում պատրիարքարանից անցնում է այդ երկու ընտրովի մարմինների ձեռքը: 1847 թ. մայիսի 20-ին նորընտիր Ազգային ընդհանուր ժողովը հրավիրում է իր առաջին նիստը⁹: Ավելի ուշ՝ 1853 թ. հոկտեմբերի 21-ին, Գերագույն և Հոգևոր ժողովների հավանությամբ ու համաձայնությամբ կազմվում է ուսումնական խորհուրդ, որը հիմնականում զբաղվելու էր ուսումնակրթական ծրագրերի մշակման, նոր դպրոցների շինարարության, հիվանդանոցի և այլ հարցերով: Այդ գործում իրենց ակտիվ դերակատարությունն ունեցան Կ. Պոլսի հայ ուսյալ երիտասարդներ Ն. Ռուսինյանը, Նիկ. Պալյանը, Գր. Օտյանը, Ս. Վիչենյանը (Սերվիչեն), Կ. Ութունձյանը և այլք¹⁰:

Սրանք կարելի է համարել 1840-ական թթ. սահմանադրական շարժման այն առաջին գործնական քայլերը, որոնք արդեն 1850-ականների երկրորդ կեսին մարմնավորվելու էին ազգային, կրոնական, մշակութային և հասարակական կյանքին վերաբերող Ազգային սահմանադրության կամ կանոնադրության մեջ: Իրավիճակը փոխվեց ու ավելի բարդացավ, երբ սկսվեց 1853-1856 թթ. ռուս-թուրքական պատերազմը, որին իրենց շահերի թելադրանքով միջամտեցին եվրոպական տերությունները: Նրանց ռազմական օժանդակության շնորհիվ Թուրքիան փրկվեց պարտությունից: Սակայն Փարիզում հրավիրված հաշտության վեհաժողովի բացման նախօրյակին՝ 1856 թ. փետրվարի 6 (18)-ին, սուլթան Աբդուլ Մեջիդը հրապարակեց մի նոր հրովարտակ՝ «**Հաթթը հումայուն**»¹¹ (արաբերեն նշանակում է «արքունի ձեռագիր») կամ «արքունի հրովարտակ»)՝ դարձյալ լի հույսերով ու պատրանքներով: Այս հրովարտակը ևս կայսրության համար բազմաթիվ բարեփոխումներ էր խոստանում: Բայց հասկանալի է, որ օսմանյան ռազմավատատիրական բռնավարչակարգի պայմաններում այն ևս կոչված չէր իրականություն դառնալու, քանզի դրանում գրվածը խոր հակասության մեջ էր բուն իրականության հետ: Այս վիճակը պահպանվեց նաև հաջորդ սուլթանի՝ Աբդուլ Ազիզի (1861-1876) օրոք:

Բայց և այնպես, «Թանգիմաթը» շոշափելի հետք թողեց Թուրքիայի տնտեսական, հասարակական, քաղաքական ու գաղափարա-

9 Տե՛ս Սարուխան Ա., նշվ. աշխ., էջ 10:

10 Տե՛ս նույն տեղում, էջ 11:

11 Տե՛ս Մատենադարան, Մ. Իզմիրլյանի արխիվ, թղթ. 14, վավ. 614:

կան կյանքի վրա¹²: Քանզի «Թանգիմաթը» խթանեց նաև օսմանահայատակ ոչ մահմեդական ժողովուրդների ինքնագիտակցության զարգացումը, «ինչն անխուսափելիորեն տանում էր դեպի ազգային ինքնորոշման գաղափարը»¹³:

Թեև 1853-1856 թթ. երկարատև ու արյունալի պատերազմում չորս պետությունների միացյալ ուժերին պարտված կողմը Ռուսաստանն էր, բայց օսմանյան կառավարության համար պարտավորեցնող պայման հանդիսացավ կայսրության քրիստոնյա փոքրամասնության իրավունքների պաշտպանությանն ուղղված քայլերի ձեռնարկումը:

Չսայած Թուրքիայում սեփական տնտեսական շահերն իրացնելու, քաղաքական գերիշխանության հասնելու, նեղուցներին տիրելու մեծ տերությունների մրցակցային պայքարին, այդուհանդերձ Փարիզի՝ 1856 թ. մարտի 18 (30)-ի 34 հոդվածներից բաղկացած հաշտության պայմանագրում «Հաթթը հումայուն»-ից վերցվել և ձևակերպվել էր 9-րդ հոդվածը, որը պարտավորեցնում էր սուլթանին արդեն հոչակած հատուկ հրովարտակի հիման վրա «ամանց կրոնական և էթնիկ խտրականության մեծահոգաբար ապահովել իր հպատակների (հատկապես կայսրության քրիստոնյա ազգաբնակչության) մշտական խնամքն ու բարությունը»¹⁴: Այդ հոդվածում շեշտվում էր, որ հիշյալ հրովարտակը պետք է հինք ծառայեր սուլթանի ու նրա կառավարության համար՝ բարելավելու քրիստոնյա հպատակների աշխարհիկ և հոգևոր կյանքը: «-Թանգիմաթը» և դրանից բխող՝ Փարիզի պայմանագրի այդ հոդվածը մի գորեղ կռվան էին իրենց շահերին հետամուտ եվրոպական պետությունների ձեռքում՝ ճնշում գործադրելու սուլթանական կառավարության վրա՝ բարվոքելու երկրի բոլոր հպատակների վիճակն ամանց ցեղի և կրոնի խտրականության: Սա կարելի է համարել արևմտահայ սահմանադրական շարժման և դրա արդյունք Ազգային սահմանադրության իրավաքաղաքական նախադրյալներից մեկը:

12 Տե՛ս **Խառատյան Ա.**, Արևմտահայերի ազգային սահմանադրությունը (1860-1863 թթ.), «Պատմաբանասիրական հանդես», 1992, N 2-3, էջ 51, 57-58:

13 «Հայոց պատմություն», հատ. 3, գիրք 1, էջ 293:

14 «Сборник договоров России с другими государствами (1856-1917)», под ред. Е. А. Адамова, М., Госполитиздат, 1952, с. 25.

2. Ազգային սահմանադրության մշակման գործընթացը

1850-ական թթ. արևմտահայության շրջանում ազատամտական գաղափարների առկայությունը խթան հանդիսացավ սահմանադրական շարժման ակտիվացման և այն գործնական հիմքերի վրա դնելու համար: Բայց պոլսահայ, նաև զմյուռնիահայ համայնքների տարբեր խավերի՝ **ամիրանների**, սեղանավորների, բանկիրների, վաճառականների, բարձր հոգևորականության, սոցիալապես ցածր աշխատավորական շերտերի, հիմնականում՝ արհեստավորների, գործակատարների, ոսկերիչների, ինչպես նաև Եվրոպայում կրթություն ստացած և պետական ծառայության անցած երիտասարդ մտավորականության միջև կային որոշակի հակասություններ՝ պայմանավորված նրանց սոցիալ-տնտեսական դրության, աշխարհիկ և հոգևոր, դասային ու կառավարչական կարգավիճակի, նյութական, կրթական և այլ պայմաններով: Ուստի 18-րդ դարի ֆրանսիական լուսավորիչների և 1848-1849 թթ. եվրոպական հեղափոխությունների ազատամիտ գաղափարներով տարված, Եվրոպայում բարձր կրթություն ստացած արևմտահայ մի խումբ երիտասարդ մտավորականներ՝ Ն. Ռուսինյանը, Գր. Օտյանը, Նիկ. Պալյանը, Ս. Վիչենյանը, Կ. Ութուճյանը և ուրիշներ, ձեռնամուխ են լինում որոշակի կանոնադրության մշակմանը: Ելնելով Փարիզի 1856 թ. մարտի 30-ի պայմանագրի քանիցս հիշատակված 9-րդ հոդվածի կատարման պահանջից՝ Բարձր Դռան գիտությամբ հանձնարարվել էր ոչ մահմեդական (հույն, հայ, հրեա) համայնքներին կազմել հանձնաժողովներ՝ իրենց համար ազգային կանոնադրություն մշակելու նպատակով: 1857 թ. փետրվարին արևմտահայ մտավորականներն ավարտում են իրենց աշխատանքը և մշակված կանոնադրության նախագիծը ներկայացնում Կ. Պոլսի Ընդհանուր ժողովի հաստատմանը¹⁵:

20-րդ դարասկզբի ծանաչված ազգային գործիչ Հ. Շահրիկյանը գրում էր, որ Կ. Պոլսում Ընդհանուր ժողով գումարելու առաջին փորձն արվել է տակավին 1725 թ.՝ Կարապետ Ծծկեր Ոլնեցու՝ Ամենայն հայոց կաթողիկոս ընտրվելու առիթով, որից հետո արդեն պատրիարքական ընտրությունների կապակցությամբ պարբերաբար գումարվել են Ընդհանուր ժողովներ: Ընդ որում, այդ ժողովների

15 Տե՛ս Պարսամյան Վ., Հարությունյան Շ., Հայ ժողովրդի պատմություն (1801-1978 թթ.), Եր., «Լույս» հրատ., 1979, էջ 171:

մասնակիցների կազմը ներկայացնում էին Կ. Պոլսի հայ հնագույն 6 թաղերի ավագ ու աթոռակալ քահանայապետերը, քարոզիչ եպիսկոպոսները կամ վարդապետները, ամիրաները և արհեստավորների գլխապետերը¹⁶:

Սահմանադրության նախագծի մշակման ու քննարկումների առնչությամբ Մ. արք. Օրմանյանը գրում է, որ 1857 թ. մարտի 22-ին պատրիարքարանում Հակոբոս (Հակոբ) պատրիարքի նախագահությամբ գումարվեց Ընդհանուր ժողովը, որին ներկա էին եկեղեցականներ, ամիրաներ, արհեստապետեր, մտավորականներ և առևտրականներ: Այդտեղ պիտի քննարկվեր արդեն մշակված կանոնադրության նախագիծը, որը սահմանադրություն էր կոչվում, «թէպէտ բառացի իմաստով կանոնադրութիւն կոչումէ չի տարբերիր»¹⁷: Ժողովականները հավանություն են տալիս այդ ծրագիր-նախագծին: Իբրև հաջորդ քայլ այն ներկայացվեց կառավարության հաստատմանը, բայց տևական սպասումներից հետո մերժվեց այն առարկությամբ, թե «պետութեան մէջ պետութիւն չի կրնար ըլլալ»¹⁸: Օրմանյանի կարծիքով՝ մերժման «իսկական պատճառը ազգին երեւելեաց մէջ ծագած գժտութեան հետեւանքն էր», որ «այն շատ **ազատամիտ** կը նկատուէր»¹⁹:

Առկա պատմավավերագիր գրականությունը ցույց է տալիս, որ շուրջ երեք տարի՝ 1857-1860 թթ., ընդունվելիք փաստաթղթի շուրջ ընթացել են բուռն քննարկումներ, խորհրդակցություններ ու բանակցություններ: Նշենք, որ խմբագրական աշխատանքները ձգձգվել են նաև Ամենայն հայոց կաթողիկոս Ներսես V Աշտարակեցու վախճանվելու (1857 թ.), նրա թաղման և նոր կաթողիկոսի ընտրության հարցերով Կ. Պոլսի բարձրաստիճան հոգևորականության ու մտավորականության տևականորեն զբաղված լինելու պատճառով: 1858 թ. հունիսին ծերության պատճառով հրաժարական էր տվել նաև Հակոբոս պատրիարքը, իսկ հոկտեմբերի 17-ին նոր պատրիարք էր ընտրվել **Գևորգ** եպիսկոպոսը (հետագայում՝ Ամենայն հայոց կաթողիկոս):

Բովանդակային ու խմբագրական զգալի փոփոխություններից հետո՝ 1859 թ., կազմվել է սահմանադրության նախագծի մի նոր տարբերակ, որն այս անգամ հանդիպել է Գևորգ պատրիարքի, նաև պահ-

16 Տե՛ս Ասոճ, մշվ. աշխ., էջ 21-22:

17 Օրմանեան Մ., Ազգապատում, հատ. Գ, մաս Բ, Պէյրուք, տպ. «Սեւան», 1961, էջ 4016:

18 Ասոճ, մշվ. աշխ., էջ 38:

19 Օրմանեան Մ., Ազգապատում, հատ. Գ, մաս Բ, էջ 4016-4017:

պանողական ու հետադեմ այլ շրջանակների ընդդիմությանը և մերժվել: Ծագած խնդիրը հարթելու համար կազմվել է 5 եկեղեցական և 14 աշխարհիկ անձանցից բաղկացած մի նոր հանձնաժողով: Եվ 1857 թ. ու 1859 թ. նախագծերն իրար համադրելով ու ձևակերպումներն իրար մերձեցնելով՝ հաջողվել է կազմել սահմանադրության կամ կանոնադրության վերջնական նախագիծ: Այս անգամ ևս Գևորգ պատրիարքը դարձյալ առարկել է՝ գտնելով, որ դրանով պատրիարքարանի իրավունքները կրճատվելու են, և պատրիարքարանը ենթարկվելու է Ընդհանուր ժողովի կամքին²⁰:

Ի վերջո հաջողվում է կոտրել Գևորգ պատրիարքի դիմադրությունը՝ նրան գահընկեց անելով: Մ. Օրմանյանը նշում է, որ երբ Գևորգ պատրիարքը չկարողացավ իր տեսակետն առաջ տանել, 1860 թ. ապրիլի 21-ին հրաժարական ներկայացրեց²¹: Ստեղծված իրավիճակում նախագծի հեղինակները, ստանալով նաև հանրության աջակցությունը, հաջողում են վերախմբագրված կանոնադրության նախագիծը **1860 թ. մայիսի 24-ին** Ընդհանուր ժողովի միջոցով անցկացնել և պատրիարքի նոր տեղապահ, Ադրիանապոլսի հայ հոգևոր առաջնորդ Սարգիս եպս Գույումձյանի կողմից վավերացնել տալ ու այդպիսով դնել գործողության մեջ: Ի դեպ, հենց այդ ժամանակ էլ կանոնադրության հեղինակներից Նահապետ Ռուսինյանի առաջարկությամբ այն կոչվեց **Ազգային սահմանադրություն**²²:

Մ. Օրմանյանը գրում է, որ 1860 թ. մայիսի 2-ին 87 քվեով պատրիարք ընտրված Ս. եպս Գույումձյանի նախագահությամբ մայիսի 24-ին մայր եկեղեցում գումարված Ընդհանուր ժողովում նախկին պատրիարք Հակոբոսի, գլխավոր եկեղեցականների և բոլոր դասակարգերի ներկայացուցիչների բազմության ներկայությամբ նախ ծայրեծայր ընթերցվեց Ազգային սահմանադրությունը, որից հետո եկեղեցականները վկայեցին, որ այն «Հայ եկեղեցույ օրինաց հակառակ բան չի պարունակեր»²³: Ամիրաները՝ Տատյանները, Պալյանները, Երամյանները և այլք, նույնպես «համարձակ հավանություն տվին», մտավորականների, ամուսնականների և արհեստավորների ներկայացուցիչները՝ ևս, և Ազգային ընդհանուր ժողովը ընդունեց ծրագիրն ու հրապա-

20 Տե՛ս նույն տեղում, էջ 4018:

21 Տե՛ս նույն տեղում, էջ 4019:

22 Տե՛ս Սարուխան Ա., նշվ. աշխ., էջ 16, Պարսամյան Վ., Հարությունյան Ը., նշվ. աշխ., էջ 172:

23 Օրմանեան Մ., Ազգապատում, հատ. Գ, մաս Բ, էջ 4019:

րակեց այն²⁴: Այս իրադարձության կապակցությամբ ճանաչված պատմագիր Ավետիս Պերպերյանը գրում է. «Եղեւ ժողով մեծ ի պատրիարքարանն հոգեւորականաց եւ աշխարհականաց, եւ Ազգային Սահմանադրութիւնն ընդունելութեամբ ամենեցուն ստորագրեցաւ»²⁵:

Սահմանադրությունը տարածքային առումով ներառում էր ամբողջ կայսրությունը (ընդամենը 65 հոգևոր վիճակ) և իր բնույթով արևմտահայության ներքին կյանքին վերաբերող ծրագրային քաղաքացիա-իրավական մի փաստաթուղթ էր: Ի պաշտոնե պատրիարքը ստանձնելու էր հրավիրվելիք Ազգային ընդհանուր ժողովի նախագահությունը, պետք է լիներ օսմանահպատակ և այլն: Ազգային սահմանադրությունը տակավին Բարձր Դռան կողմից չհաստատված՝ անցկացվեցին երեսփոխանական (պատգամավորական) ընտրություններ, որոնք տևեցին երեք ամիս: Կ. Պոլսի մամուլն արձագանքել է մայրաքաղաքի թաղերում և գավառներում անցկացված ընտրություններին: Այսպես՝ «Մեղու» տասնօրյա հանդեսն ուշադիր հետևել է ընտրությունների ընթացքին և դրական է արտահայտվել դրանց արդյունքների վերաբերյալ: Հոդվածագիրը հանդեսի առաջնորդողում պատմում էր, թե ինչպես են անցկացվել Ազգային ընդհանուր ժողովի ընտրությունները հունիսի 26-ին Պոլսի թաղերից Խասգյուղում և Բերայում: Թղթակիցը մամուլում զետեղել է իր ֆրանսիացի բարեկամի ստացած տպավորությունը Բերայի Ս. Երրորդություն եկեղեցում անցկացված քվեարկությունից. «Հայերը կ'ըսէ Եւրոպացոց կարծածին պէս չեն եղեր, անոնց հոգին արթուն է եղեր և ամենքն ալ քաղաքակրթութեան վայելման միջոցներուն խելահաս հոն քուէ տուփին մոտ տեսնելու էր՝ թէ ի՛նչ վեհանձնութեամբ և ակնածութեամբ կը նետէին իրենց քուէն ու անուննին անոր քով դրուած թուղթին վրայ ստորագրելնուն ետև հանգարա խղճմըտանքով ու գուարթ դէմքով և վեհ ճակատով կը հեռանային»²⁶:

Որպես արդյունք՝ 1860 թ. **օգոստոսի** 25-ին Կ. Պոլսում՝ մայր վարժարանի սրահում, գումարվեց ոչ լիակազմ առաջին Ազգային ընդհանուր ժողովը, որին մասնակցեց սահմանադրությամբ նախատեսված 220-ի փոխարեն ընդամենը 180 պատգամավոր, որից 120-ը ընտրված երեսփոխաններ էին, և 60-ը՝ չընտրված (հրավիրված-անդամակից-

24 Տե՛ս նույն տեղում:

25 Պերպերեան Ա., մշվ. աշխ., էջ 621:

26 «Մեղու», Կ. Պոլիս, 30 յունիսի 1860 թ., N 102, էջ 137:

ներ), այսինքն՝ նրանք, ովքեր ի պաշտոնե (իրենց պետական, կրթական, հոգևոր, լրագրական, խմբագրի և այլ կարգավիճակով) առանց ընտրության իրավունք ունեին ներկայացուցչական տեղ զբաղեցնելու Ազգային ընդհանուր ժողովում: Պատմագիր Ա. Սարուխանի ներկայացմամբ՝ այդպիսիք էին բոլոր եպիսկոպոսները, բարձրաստիճան պետական հայ պաշտոնյաները, ազգային մատենագիրները, ավագ ուսուցիչները, լրագրերի խմբագիրները և այլք²⁷: Այդպիսով 1860 թ. մայիսի 24-ի Ազգային սահմանադրությամբ իբրև առաջին գործնական քայլ ձևավորվեց ընդամենը **180** երեսփոխաններից կազմված առաջին Ազգային ընդհանուր ժողովը (խորհրդարանը)²⁸:

Սակայն Ազգային սահմանադրության՝ պետական-պաշտոնական մակարդակով վավերացումն ու ամբողջությամբ գործնական կիրառության մեջ դրվելը ձգձգվեց: Դրա պատճառը նախ և առաջ հայ հոգևոր և աշխարհիկ շրջանակների ներսում եղած ներքին տարակարծություններն էին, որոնք հաճախ ուղեկցվում էին փողոցային բողոքներով և անգամ ծեծկռտուքներով, մյուս կողմից էլ՝ ժամանակ շահելու նպատակով Բարձր Դուռն էր գիտակցաբար հետաձգում դրա հաստատումն ու գործադրումը: Տվյալներ կան, որ հակասահմանադրական պայքարի մեջ էին ներքաշվել նախկին պատրիարքներ Գևորգ և Հակոբոս եպիսկոպոսները: Այդ ընթացքում եղել է նաև աթոռակռիվ: Ընդ որում, ընդդիմության մի հատվածը մտադրություն է ունեցել Հակոբ եպս Եդեսացուն դարձնելու Կ. Պոլսի, իսկ Գևորգ եպիսկոպոսին՝ Երուսաղեմի պատրիարք: Սակայն Բարձր Դուռը չի ընդունել պատրիարք փոխելու առաջարկը: Այնուամենայնիվ, լարված մթնոլորտի պատճառով 1861 թ. հոկտեմբերի 21-ին Սարգիս պատրիարքը հարկադրված հրաժարական է տվել²⁹:

Ստեղծված իրավիճակում 1861 թ. աշնանը սահմանադրությունը կրկին վերաքննության ենթարկելու համար կառավարությունը ձևավորում է նոր հանձնաժողով, որի կազմում ընդգրկվեցին Ս. Վիչենյանը, Ստ. Ասլանյանը, Գ. Աղաթոնը, Հ. Նորատունկյանը, իսկ նախկին անդամներից՝ Գր. Օտյանը, Ն. Ռուսինյանը և ուրիշներ: Կրկին վերանայվեց, փոփոխվեց ու խմբագրվեց սահմանադրության տեքստը, և 1862 թ. ապրիլին վերախմբագրված նոր տարբերակը ներկայացվեց

27 Տե՛ս Սարուխան Ա., նշվ. աշխ., էջ 21:

28 Տե՛ս «Հայոց պատմություն», հատ. 3, գիրք 1, էջ 365:

29 Տե՛ս Օրմանեան Ա., Ազգապատում, հատ. Գ, մաս Բ, էջ 4046-4052:

կառավարության հաստատմանը: Ընդ որում, պոլսահայության շրջանում շարունակվում էին բանակռիվն ու փողոցային պայքարը սահմանադրության կողմնակիցների (Հ. Սվաձյան, Մ. Մամուրյան, Կ. Փանոսյան, նաև Պոլիս ժամանած Մ. Նալբանդյան) և հակառակորդների (Հ. Չամուռձյան-Տերոյենց, դրսից՝ Մ. և Զ. Մսերյաններ և այլք) միջև:

Թուրքական իշխանությունները կրկին ձգձգում են սահմանադրության վավերացումը, և շուրջ մեկամյա քաշքշուկներից, խմբագրական ու բովանդակային (հատկապես հայերեն ու թուրքերեն տարբերակների) որոշ շտկումներից հետո՝ **1863 թ. մարտի 17-ին**, Բարձր Դուռն ի վերջո վավերացնում է այն՝ «իբրեւ օսմանյան պետական օրէնք»: Պատրիարքարան ուղարկվեց սուլթանի հաստատած **Ազգային սահմանադրությունը՝ թուրքերեն «Նիզամնամէի միլլէթի էրմէնիան»** վերտառությամբ³⁰: Մի քանի օր անց՝ **մարտի 20-ին**, Ազգային ընդհանուր ժողովը՝ պատրիարքի տեղապահ Ստեփան Եպս Մաղաքյանի նախագահությամբ, միաձայն ընդունեց փաստաթուղթը և շնորհակալական ուղերձ հղեց Բարձր Դուռնը³¹: Նշենք, որ արևմտահայերի «Ազգային Սահմանադրութիւն Հայոց»-ը թարգմանվել ու լույս է տեսել մի քանի այլ լեզուներով՝ ֆրանսերեն, անգլերեն, ռուսերեն: Կարծում ենք, որ Բարձր Դուռն կողմից սահմանադրության հաստատման գործում իր դերն է ունեցել նաև 1862 թ. ամռանը բռնկված Զեյթունի աննախադեպ հերոսամարտը:

Ի դեպ, այդ նույն պատմաշրջանում Օսմանյան կայսրությունում սահմանադրական շարժման ու պայքարի միջոցով ինքնավարության հասնելու հաջողված փորձեր են կատարվել Լեռնային Լիբանանում, Կրետե կղզում, կայսրության հունական ու հրեական համայնքների շրջանում և այլն: Այսպես, օրինակ, հայտնի է, որ եվրոպական հինգ տերությունների միջամտությամբ Լեռնային Լիբանանի համար մշակվել էր կանոնադրություն, և **1861 թ. հունիսի 9-ին** Կ. Պոլսում կնքվել էր համապատասխան մի փաստաթուղթ, որով Լեռնային Լիբանանի նախկին երկու շրջանների միավորումով Օսմանյան կայսրության կազմում ստեղծվում էր մեկ միասնական ինքնավար նահանգ (մութասարիֆություն), որը լինելու էր եվրոպական պետությունների վե-

30 Տե՛ս Սարուխան Ա., նշվ. աշխ., էջ 24-25, «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 5, Եր., Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., 1974, էջ 340, «Հայոց պատմություն», հատ. 3, գիրք 1, էջ 367:

31 Տե՛ս Սարուխան Ա., նշվ. աշխ., էջ 28:

րահսկողության ներքո³²: Հավելենք նաև, որ մինչ այդ՝ 1860 թ. մայիս-հունիս ամիսներին, Լիբանանում տեղի էին ունեցել հազարավոր քրիստոնյա մարտնիների կոտորածներ մահմեդական դրուզների կողմից: Եվ այդ փաստաթուղթը կոչված էր կարգավորելու տեղի բազմաէթնիկ ու բազմակրոն ժողովուրդների հարաբերությունները: Կանոնադրության համաձայն՝ ինքնավար մարզը կառավարելու համար, եվրոպական պետությունների ներկայացմամբ, սուլթանը նշանակելու էր գեներալ-նահանգապետ (մութասարիֆ): Եվ թող զարմանալի չթվա՝ առաջին նահանգապետ էր նշանակվել հայազգի Արթին Կ. Դաուդյանը³³:

3. Սահմանադրություն, թե՛ կանոնադրություն

Անշուշտ, իրավաքաղաքական իմաստով չափազանցություն կլինի փաստաթուղթը սահմանադրություն անվանելը, քանզի սահմանադրություն ունենում է իրավական պետությունը, էլ չենք խոսում նրա միջազգայնորեն ճանաչված լինելու մասին: Եվ այդ իմաստով արևմտահայերի Ազգային սահմանադրությունը չպետք է շփոթել հիմնական օրենք հանդիսացող սահմանադրության հետ: Հիմնահարցի քաջագիտակ հետազոտող Ա. Սարուխանի կարծիքով՝ «Սահմանադրութիւն» մեծադիրորդ կոչման փոխարեն ավելի նպատակահարմար կլիներ այն անվանել պարզապես «Կանոնադրութիւն հայ համայնքի», որը, իր բովանդակությամբ համապատասխան, կոչված էր կազմակերպելու հայ աշխարհիկ և կրոնական հասարակական կյանքը³⁴: Քանի որ Օսմանյան կայսրությունը բացարձակ միապետական երկիր էր, խոսք չէր կարող լինել արևմտահայության համար իրական սահմանադրական կարգի մասին: Բնական է, որ սուլթանական կառավարությունը չէր կարող հանդուրժել ու թույլ տալ նման կարգավիճակ: Ուստի այս սահմանադրությունը պետք է համարել ընդամենը հայոց հոգևոր և աշխարհիկ ներքին հարաբերությունները կանոնակարգող, Բարձր Դռան կողմից օրենքի ուժ ստացած իրավական փաստաթուղթ: Ավելին՝ խոսքը քրիստոնյա հպատակ էթնոսին ներքին ինքնավարություն տալու մասին էր: Այս առնչությամբ կարելի է նաև դատողություն

32 Տե՛ս **Թովուզյան Հ.**, Սիրիայի և Լիբանանի հայ գաղթօջախի պատմություն (1841-1946 թթ.), Եր., 1986, էջ 302:

33 Տե՛ս **Հովհաննիսյան Ն.**, Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է, Եր., 2010, էջ 78:

34 Տե՛ս **Սարուխան Ա.**, նշվ. աշխ., էջ 17:

անել, որ իշխանությունների համար գուցե ավելի դյուրին էր հպատակ ժողովրդին նման կարգավիճակ տալով հնազանդ պահել նրան ու անցավագին կառավարել երկիրը:

Հայտնի է նաև, որ այս կամ այն պետության սահմանադրությունը կոչված է սահմանելու տվյալ երկրի պետական կառուցվածքը, ընտրական համակարգը, պետամարմինների գործունեության սկզբունքները, դրանց տարանջատման ու հակակշռման աստիճանը, քաղաքացիների հիմնական իրավունքներն ու պարտականությունները և այլն: Բայց այստեղ խոսքը Օսմանյան կայսրությունում ապրող հայ համայնքի համար մշակված ներքին սահմանադրություն-կանոնադրության մասին է: Ինչպես նշվեց, թուրքերենում և պաշտոնական փաստաթղթերում 1863 թ. հաստատվածն անվանվում էր «Նիզամնամէի միլլէթի էրմէ-նիան», հայերեն՝ «Հայ ազգի կանոնադրություն», իսկ «սահմանադրություն» բառի համարժեքը թուրքերենում «Կանունու էսասի»-ն է³⁵:

Խնդրին գիտակ Հ. Շահրիկյանի կարծիքով՝ հայերեն բնագրից թուրքերեն թարգմանության մեջ «կանոնադրություն» հղումն ավելի շուտ եղել է խմբագրակազմի (ընդ որում, բոլոր անդամներն էլ ազգությամբ հայեր էին) «մտավախության արդիւնք, քան պետական լուրջ ընդդիմութեան»³⁶: Ըստ ամենայնի, դա արվել է հետագա բարդություններից խուսափելու համար: Բացի այդ՝ պետք է հաշվի առնել, որ արևմտահայերենում «սահմանադրություն» և «կանոնադրություն» բառերը հոմանիշներ են, նշանակում են «օրենք, կանոն» և չեն տարբերակվում քաղաքական կամ իրավական առումներով³⁷:

Ավելին՝ մինչ այդ էլ արևմտահայերի ազգային ու եկեղեցական գործերին վերաբերող կանոնադրությունները շատ հաճախ կոչվել են սահմանադրություն³⁸: Հավելենք, որ հայ եկեղեցու կառավարմանը վերաբերող կանոնադրությունը միաժամանակ կոչվել է սահմանադրություն: Այսպես՝ արևմտահայ պատմաբան ու բանասեր Արշակ Ապոյաճյանը 1945 թ. հունիսին Էջմիածնի ազգային-եկեղեցական ընդհանուր ժողովում ընդունվելիք կանոնադրությունն անվանում էր «Հայ եկեղեցիին Սահմանադրութիւն», որն արտացոլված է նրա աշխատու-

35 Տե՛ս «Հայոց պատմություն», հատ. 3, գիրք 1, էջ 371-372:

36 Ատոմ, նշվ. աշխ., էջ 10:

37 Տե՛ս Աւետիքեան Գ., Սիրմէլեան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հատ. Ա, Եր., ԵՊՀ հրատ., 1979, էջ 1051:

38 Տե՛ս «Հայոց պատմություն», հատ. 3, գիրք 1, էջ 372:

թյան խորագրում³⁹: Այստեղ, իհարկե, կարևորը ոչ միայն և ոչ այնքան գուտ անվանումն էր, որքան այն կրող փաստաթղթի բովանդակությունը, հատկապես դրա կիրարկման գործիքակազմն ու երաշխիքները, որոնք պակասում, եթե չասենք, բացակայում էին:

Անշուշտ, փաստաթուղթն իր բովանդակությամբ կոչված էր կարգավորելու Օսմանյան Թուրքիայում հայ համայնքի ու եկեղեցու ներքին՝ ազգային, հասարակական, կրթամշակութային, հոգևոր-կրոնական և այլ գործեր: Իհարկե, պետք է նկատի ունենալ, որ այն ժամանակների միահեծան ու բռնապետական Թուրքիան տակավին չուներ սեփական համապետական սահմանադրություն, ուստի բնականաբար խոսք չէր կարող լինել նրա գերիշխանության տակ հեծող արևմտահայության իսկական սահմանադրության մասին: Բայց և այնպես, այն արևմտահայության ազգային ու հոգևոր շրջանակների համար որոշակի ինքնուրույնության, ներքին կյանքը համակարգելու հնարավորություններ էր ընձեռում:

Ազգային-քաղաքական առումով պետք է նշել, որ «սահմանադրություն» ձևակերպումը վկայում է արևմտահայ լուսավորյալ մտավորականության ու ժողովրդի ձգտման մասին՝ հասնելու ազգային-մշակութային ինքնուրույնության (**ինքնավարության**), իսկ գուցե ավելի բարձր նշածողի՝ **հող-հայրենիքի ազատագրությանը**: Արևմտահայերի Ազգային սահմանադրությունը, ինչ խոսք, նպաստեց արևմտահայ կրթալուսավորական, գրահրատարակչական և առհասարակ ազգային-մշակութային կյանքի աշխուժացմանը, մյուս կողմից որոշակիորեն սահմանափակեց պատրիարքարանի և հոգևորականների (կղերականների) իշխող ու ճնշիչ դերակատարությունը, ինչի շնորհիվ սկսեցին ավելի զարգանալ հասարակական հարաբերությունները, աշխարհիկ քաղաքացիական սկզբունքները, և աստիճանաբար մեծացավ ժողովրդական զանգվածների դերակատարությունը: «Իր ամբողջ կանոնադրական բնությով հանդերձ սահմանադրությունը սնուցում էր **ազգային ինքնորոշման տրամադրություններ** (ընդգծումը մերն է - Ա. Հ.)»⁴⁰: Չի կարելի չհամաձայնել նաև պրոֆեսոր Վ. Պարսամյանի այն եզրահանգման հետ, որ «**Ազգային սահմանադրությունը մի լուսավոր էջ էր, արևմտահայ հասարակական-քաղաքական**

39 Տե՛ս Ալփոյաճեան Ա., Հայ Եկեղեցիին Սահմանադրութեան հարցը, Գահիրէ, «Նոր աստղ» տպ., 1945, էջ Ա:

40 «Հայոց պատմություն», հատ. 3, գիրք 1, էջ 372:

մտքի հասունության արտահայտություն, նրա առաջադիմական ուժերի պայքարի արդյունք (ընդգծումը հեղինակինն է – Ա. Հ.)»⁴¹:

4. Ազգային սահմանադրության 1860 թ. և 1863 թ. տարբերակների և հայատառ թուրքերեն թարգմանության համեմատական քննություն

Ամենից առաջ աչքի են գարնում սահմանադրություն կամ կանոնադրություն համարվող երկու՝ 1860 թ. և 1863 թ. տարբերակների կառուցվածքային ու հոդվածների քանակի տարբերությունները, որոնք, ինչ խոսք, շատ էական են: Այսպես՝ 1860 թ. պատրիարքարանի հաստատած տարբերակը կազմված է **150** հոդվածից, իսկ 1863 թվականինը, վերախմբագրվելով, կրճատվելով ու խտացվելով, ամփոփվել է ընդամենը **99** հոդվածում, ինչը գրեթե նույնությամբ պահպանվել է նաև հայատառ թուրքերեն տարբերակում: Հարց է ծագում. հոդվածների նման կտրուկ՝ ավելի քան 1/3-ով կրճատումը չի՞ անդրադարձել արդյոք 1863 թ. Բարձր Դռան վավերացրած վերջնական տարբերակի կառուցվածքի, բովանդակության, իրավական կամ քաղաքական կողմերի վրա: Ազգային սահմանադրության՝ 1860 թ. մայիսի 24-ին Ազգային ընդհանուր ժողովում ընդունված և պատրիարքի կողմից վավերացված ու գրեթե երեք տարվա ձգձգումներից հետո՝ 1863 թ. մարտի 17-ին, Բարձր Դռան կողմից վերջնականապես վավերացված տեքստերի կառուցվածքային ու բովանդակային համեմատությունը ցույց է տալիս, որ դրանց միջև կան շատ մեծ ընդհանրություններ, բայց և որոշակի, կարելի է ասել՝ ոչ էական տարբերություններ:

Երկու տարբերակների համեմատությունը սկսենք Ազգային սահմանադրության՝ ներածական բնույթ կրող «Հիմնական սկզբունք»-ից: Երկու դեպքում էլ պահպանված են **վեց** հիմնադրությային կետերը, բայց այն տարբերությամբ, որ կատարվել են հարցերի հաջորդականության ու շարադրանքի որոշ տեղաշարժեր ու վերախմբագրումներ: Այսպես՝ 1860 թ. տարբերակի **Ա** ենթակետում տեղ գտած «Ազգային Վարչութեանը Օսմանեան Տէրութեւնէն յատուկ արտօնութեամբ յանձնեալ է Տաճկաստանի Հայոց ներքին գործոց տնօրէնութիւնը» պահան-

41 Պարսամյան Վ., Հարությունյան Շ., նշվ. աշխ., էջ 175:

ջը 1863 թ. տարբերակում լրացվել է «Սահմանադրութեան միջոցաւ» կապակցությամբ և որոշակի խմբագրմամբ տեղափոխվել **Գ** ենթակետ: Այստեղ թերևս նկատվող տարբերություններից մեկն այն է, եթե դա կարելի է տարբերություն համարել, որ 1860 թ. տարբերակում նշված «Տաճկաստանի Հայոց»-ի փոխարեն 1863 թ. տարբերակում «Թուրքիոյ Հայոց» է⁴²:

1860 թ. տարբերակի «Հիմնական սկզբունք»-ի **Ե** ենթակետում խոսվում է ազգի բարոյական, մտավոր, նյութական պարտականությունների, Հայաստանյայց եկեղեցու դավանանքն ու ավանդույթներն անխախտ պահելու և այլ հարցերի մասին: Այս նույն ձևակերպումը տեղափոխվել է 1863 թ. տարբերակի **Գ** ենթակետ, միայն թե «**անխախտ**» բառը փոխարինվել է ավելի նուրբ ու բարեհունչ «**անարատ**» բառով⁴³:

Արդեն արձանագրել ենք, որ 1863 թ. Ազգային սահմանադրության «Հիմնական սկզբունք»-ի հիմնադրույթների **Ե** ենթակետում տեղ է գտել մի էական ձևակերպում, որ «Վարչութիւնը՝ ազգային ըլլալու համար, պէտք է ԵՐԵՄՓՈՒԽԱՆԱԿԱՆ ըլլայ»⁴⁴, մի բան, որ բացակայում է 1860 թ. տարբերակում, ընդ որում «երեսփոխանական» բառն ընդգծված է:

Կառուցվածքային առումով 1860 թ. և 1863 թ. սահմանադրությունների բուն գլուխների համեմատությունը ցույց է տալիս, որ երկու դեպքում էլ դրանց քանակը նույնն է՝ ընդամենը **Ե** (5) գլուխ, սակայն էապես փոփոխված են վերնագրերը, հոդվածների հաջորդականությունը, իսկ առանձին դեպքերում՝ նաև բովանդակությունը: Կառուցվածքային համեմատությունը ցույց է տալիս, որ, ըստ բովանդակության ու հարցադրումների, կատարվել են տեղաշարժեր ու փոփոխություններ, հոդվածների խտացումներ և այլն, որոնց հետևանքով ավելի են բարելավվել առաջադրված հարցերի ու հոդվածների հաջորդականությունն ու ներքին տրամաբանական կապը՝ առանց էապես խա-

42 Տե՛ս «Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1860 թ.)», Կ. Պօլիս, տպ. «Յ. Միլիէնտիսեան», 1860, էջ 5: Տե՛ս նաև «Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1863 թ.)», Կ. Պօլիս-Ստամպօլ, ի տպարանի Յ. Միլիէնտիսեան, 1963, էջ 12, նաև **Սիմոնյան Հ.**, Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք 3, Եր., ԵՊՀ հրատ., 2009, էջ 1012:

43 Տե՛ս «Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1860 թ.)», էջ 6, «Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1863 թ.)», էջ 11, նաև **Սիմոնյան Հ.**, Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք 3, էջ 1011:

44 «Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1863 թ.)», էջ 12, նաև **Սիմոնյան Հ.**, Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք 3, էջ 1012:

թարելու հողվածների բովանդակությունը, մի խոսքով՝ բուն տեքստի շարադրանքը:

Երկու տարբերակներում էլ գլխավոր ու ամենաընդարձակ գլուխը Ա-ն է, որը 1860 թ. տարբերակում վերնագրված է «Ազգային վարչություն» և ունի 83 հողված, իսկ 1863 թ. սուլթանական կառավարության հաստատած տարբերակում վերնագրված է «Ազգային Կենտրոնական վարչություն» և ունի մեկով ավելի հողված՝ 84⁴⁵:

1860 թ. տարբերակի Բ գլուխը՝ «Ազգային տուրք» գլխագրով ու 5 հողվածով, 1863 թ. տարբերակում տեղափոխված է Գ գլուխ նույն գլխագրով ու մեկով պակաս՝ 4 հողվածով⁴⁶:

1960 թ. սահմանադրության 2-րդ ընդարձակ գլուխը՝ Գ-ն, որը վերաբերում է ընտրություններին, ունի 38 հողված (89-127)⁴⁷: Սահմանադրության երկու տարբերակների համեմատությունը ցույց է տալիս, որ 1863 թ. վերջնական տարբերակում չկա «Ընտրություններ» վերտառությամբ առանձին գլուխ: Այստեղ սահմանադրության խմբագիր հեղինակներն ընտրություններին վերաբերող բոլոր հարցերն իրավացիորեն խմբավորել ու տարրալուծել են նախորդ գլուխներում, հիմնականում Ա գլխում՝ կապված բոլոր մակարդակի ընտրությունների կազմակերպման ու անցկացման կանոնադրական պայմանների ու պահանջների հետ՝ սկսած պատրիարքի և Ազգային ընդհանուր ժողովի ընտրություններից, ավարտած գավառային և թաղային խորհուրդների ընտրություններով: Այդ պատճառով էլ 1963 թ. սահմանադրության Ա գլխի հողվածներն իրենց թվաքանակով չեն գիջում 1860 թ. սահմանադրության Ա գլխի հողվածներին:

Սահմանադրության երկու՝ 1860 թ. և 1863 թ. տարբերակների հողվածների քանակական մեծ խզումը բացատրվում է հիմնականում կառուցվածքային ու խմբագրական փոփոխություններով՝ կրճատում-խտացում-վերախմբագրումներով: Այսպես՝ 1860 թ. տարբերակում «Ազգային տնտեսական խորհուրդ» ենթագլուխն ունի 13 հողված՝ 38-ից 50-րդը ներառյալ, մինչդեռ 1863 թ. տարբերակում այն սեղմվել ու ձևա-

45 Տե՛ս «Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1860 թ.)», էջ 7-26, «Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1863 թ.)», էջ 13-49, նաև Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք 3, էջ 1012-1036:

46 Տե՛ս «Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1860 թ.)», էջ 26-27, «Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1863 թ.)», էջ 51, նաև Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք 3, էջ 1037:

47 Տե՛ս «Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1860 թ.)», էջ 27-38:

կերպվել է ընդամենը մեկ՝ 46-րդ ծավալուն հոդվածում⁴⁸: Կամ, օրինակ, 1863 թ. տարբերակում այլևս մանրամասն չի խոսվում ազգային կալվածքների գնման ու վաճառքի, կտակների հսկման ու դրանց վավերացման, շինությունների, հիվանդանոցների ու ծերանոցների պահպանման ու վերահսկման, նյութական ու տնտեսական հարցերի մասին: Կամ՝ 1860 թ. Ա գլխի Ժ (10-րդ)՝ «Ազգային դիվանատուն» 9-հոդվածանոց ենթագլուխը 1863 թ. տարբերակում տեղափոխվել է նույն Ա գլխի Բ (2-րդ) ենթակետ՝ «Կ. Պոլսի պատրիարք»-ից հետո՝ առանց բովանդակությունն էապես խաթարելու՝ սահմանափակվելով ընդամենը 4 հոդվածով և այլն⁴⁹:

Հաշվի առնելով, որ նախկինում Ս. Երուսաղեմի հայոց պատրիարքի ընտրությունների առնչությամբ հաճախ խնդիրներ էին ծագել, հատկապես «ներսէն, թէ դուրսէն» թեկնածուի առաջադրման ու ընտրության հարցում⁵⁰, ուստի 1863 թ. սահմանադրության մեջ ներառվել էր մի առանձին՝ Գ ենթագլուխ, որի 21-րդ հոդվածում սահմանվում էր, որ «Ս. Երուսաղեմի պատրիարքը Կոստանդնուպոլսոյ Ազգային ժողովներուն կողմէն կ'ընտրուի»⁵¹: Մինչդեռ 1860 թ. տարբերակում այդ մասին որևէ հիշեցում չկա:

Իբրև տարբերություն նկատենք նաև, որ 1860 թ. տարբերակի 8-րդ հոդվածում ակնարկ կա Ազգային վարչության, Կ. Պոլսի պատրիարքի և Արարատյան Մայր Աթոռի հետ ունեցած և այդուհետ շարունակվելիք «Ազգ ու Մայր Աթոռ» միասնությամբ ավանդական կապի ու հարաբերությունների մասին⁵², մի բան, որ բացակայում է 1863 թ. վերջնական տարբերակում: Կարելի է ենթադրել, որ խմբագրակազմի անդամները գուցե քաղաքական նկատառումով դուրս են թողել այդ հոդվածը, որպեսզի հատուկ չընդգծվի Կ. Պոլսի պատրիարքության և Ս. Էջմիածնի Մայր Աթոռի կապը:

Ի պաշտոնե Ազգային ժողովների նախագահ հանդիսացող պատրիարքի իրավունքներին ու պարտականություններին վերաբերող 1860 թ. տարբերակի 14-19-րդ և 1863 թ. տարբերակի 8-12-րդ հոդ-

48 Տե՛ս «Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1860 թ.)», էջ 17-19, «Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1863 թ.)», էջ 30-32, նաև **Սիմոնյան Հ.**, Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք 3, էջ 1023-1024:

49 Տե՛ս «Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1860 թ.)», էջ 22-24, «Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1863 թ.)», էջ 20, նաև **Սիմոնյան Հ.**, Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք 3, էջ 1017:

50 Տե՛ս **Օրմանեան Մ.**, Ազգապատում, հատ. Գ, մաս Բ, էջ 4034-4036:

51 Մեջբերումը ըստ՝ **Սիմոնյան Հ.**, Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք 3, էջ 1018:

52 Տե՛ս «Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1860 թ.)», էջ 9-10:

վածների բովանդակային համեմատությունը ցույց է տալիս, որ դրանց միջև էական տարբերություններ չկան⁵³:

Էական տարբերություն կա Ազգային ընդհանուր ժողովի պատգամավորական տեղերի քանակի ու սոցիալ-դասային հարաբերակցության առումով: 1860 թ. սահմանադրության 9-րդ հոդվածը սահմանում էր, որ «Ազգային Ընդհանուր ժողովը կը բաղկանայ 220 ազգային երեսփոխաններէ, որոնցմէ 160-ը Պօլսի թաղերուն եկեղեցեաց կողմէն ընտրեալ (ի դեպ, միայն Գում Գափուի մայր եկեղեցին ընտրում էր 24 պատգամավոր – Ա. Հ.), եւ 60-ը առաջնորդանիստ գաւառներուն կողմէն ընտրեալ»⁵⁴: Թեև նշվում էր, որ պատգամավորներից 160-ը Պոլսի թաղերի եկեղեցիների կողմից էին ընտրվելու, բայց որոշակի չէր այն, թե սոցիալ-դասային առումով նրանցից քանիսն էին աշխարհիկ լինելու, և քանիսը՝ եկեղեցական (հոգևորականներ): Նույն հոդվածում նշվում էր, որ Ազգային կենտրոնական վարչության՝ Կրոնական ու Քաղաքական ժողովների և չորս տեսչական խորհուրդների անդամներից ու թաղական խորհուրդների ատենապետներից ընտրվելու էր 100 երեսփոխան⁵⁵: Ասվածը, սակայն, հիմք չի տալիս հետևեցնելու, թե այդ 100 երեսփոխաններն էլ միայն աշխարհիկ անձինք էին լինելու, քանզի նրանցից, օրինակ, Կրոնական ժողովի անդամները եկեղեցականներ էին: Հստակ սահմանված չէ նաև, թե սոցիալ-դասային պատկանելության առումով Պոլսի թաղերի կողմից ընտրված 160 պատգամավորներից 100-ը պիտի լինեի՞ն գուտ աշխարհիկ անձինք, իսկ 60-ը՝ միայն եկեղեցական, թե՞ ոչ, մանավանդ որ այդ 160 պատգամավորներն ընտրվելու էին Պոլսի թաղերի եկեղեցիներում: Այսինքն՝ ընտրվելիք պատգամավորների սոցիալ-դասային կազմի հարցում հստակություն չի եղել: Եվ այդ առումով հնարավոր չէ միանշանակ պնդել, որ Կ. Պոլսի թաղերում ընտրվելիք 160 երեսփոխաններից 100-ը աշխարհիկ անձինք էին լինելու, իսկ 60-ը՝ կրոնավորներ, ինչը հաճախ տեղ է գտել մեր պատմագիտական գրականության մեջ: Այդ անորոշության մասին ակնարկվում է նաև նույն՝ 9-րդ հոդվածի տողատակում, որ «Այս յոդվածը վերաքննելի է»⁵⁶:

53 Տե՛ս «Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1860 թ.)», էջ 12-14, «Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1863 թ.)», էջ 18-19, նաև Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք 3, էջ 1015-1016:

54 «Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1860 թ.)», էջ 10:

55 Տե՛ս նույն տեղում:

56 Նույն տեղում, էջ 11:

Նույնը կարելի է ասել առաջնորդանիստ գավառների կողմից ընտրվելիք 60 երեսփոխանների կազմի մասին: Չի բացառվում, որ գավառներում ընտրված պատգամավորների թվում լինեին նաև հոգևորականներ, մանավանդ որ ընտրվում էին գավառային առաջնորդական վիճակներում (թեմերում), իսկ կրթական ցենզի տեսանկյունից նրանք խնդիր չունեին: Այստեղից կարելի է հետևեցնել, որ 1860 թ. ընտրական համակարգում պատգամավորների (աշխարհիկ և հոգևորական) թվակազմի առումով հստակություն չի եղել:

Մյուս կողմից՝ կարող է հարց ծագել, թե ինչու է պատգամավորական տեղերի նման մեծ տարբերություն եղել. Կ. Պոլսի համար՝ 160, իսկ գավառների համար՝ ընդամենը 60 տեղ, և սա այն դեպքում, երբ գավառահայ ազգաբնակչությունը թվաքանակով ավելի քան տասնապատիկ գերազանցել է Կ. Պոլսի թաղերի հայությանը: 1860 թ. սահմանադրությամբ մայրաքաղաք-գավառ համամասնության նման մեծ խզումը կարելի է բացատրել՝ ա) Կ. Պոլիս մայրաքաղաքի՝ գավառների նկատմամբ ունեցած առանձնահատուկ կարգավիճակով, բ) գավառների բնակչության կրթական համեմատաբար ցածր մակարդակով, ինչին թերևս պիտի հավելել սահմանադրության հեղինակների սուբյեկտիվ կարծիքը: Ի դեպ, մայրաքաղաքի և գավառի համար սահմանված պատգամավորական տեղերի այս տարբերությունը գրեթե նույն համամասնությամբ պահպանվեց սահմանադրության 1863 թ. վերջնական տարբերակում:

Պատգամավորների թվաքանակը և սոցիալ-դասային կազմը միանգամայն այլ են 1863 թ. վավերացված սահմանադրության մեջ, որում մի շարք անորոշություններ վերացվել են: Նախ՝ էապես (80 տեղով) կրճատված է պատգամավորների ընդհանուր թվաքանակը, ապա՝ 57-րդ հոդվածի և՛ հայերեն, և՛ թուրքերեն տարբերակներում հստակ ու վերջնականապես սահմանված է, որ «Ազգային Ընդհանուր ժողովը **140** երեսփոխաններ է կր բաղկանայ, որոնցից Ա. 20-ը եկեղեցականք երեսփոխանք են, զոր Կոստանդնուպոլսոյ մէջ գտնուող եկեղեցանք կ'ընտրեն, Բ. 40-ը գաւառներէն եւ Գ. 80-ը Կոստանդնուպոլսոյ թաղերէն ընտրուած երեսփոխանք են»⁵⁷: Բերվածից հետևում է, որ 1860 և 1863 թթ. Ազգային ընդհանուր ժողովների պատգամավորների

57 **Սարուխան Ա.**, մշվ. աշխ., էջ 25-26, «Յաւելուած», էջ 76, **Պալասանեան Ստ.**, Պատմութիւն Հայոց (սկզբից մինչեւ մեր օրերը), Թիֆլիս, 1895, էջ 746:

հարաբերակցության մեջ հոգևորական երեսփոխանների թիվը նախկինի համեմատ եռակի կրճատվել է՝ 60-ից դառնալով 20, իսկ աշխարհիկ պատգամավորների թիվն ավելացել է 20-ով՝ 100-ից դառնալով 120: Այս ամենն ինքնին վկայում է Ազգային ժողովում վերջիններիս գերիշխող դիրք ունենալու և խորհրդարանի՝ ավելի ու ավելի աշխարհիկ բնույթ ստանալու մասին: Խորհրդանշական կարելի է համարել նաև այն, որ այս Ազգային ընդհանուր ժողովի և մեր ժամանակների ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվաքանակը քիչ է տարբերվում:

1860 թ. և 1863 թ. սահմանադրություններում Ազգային ընդհանուր ժողովի պատգամավորների թվակազմին ու ընտրություններին վերաբերող մյուս տարբերությունն այն է, որ, ըստ 1860 թ. տարբերակի, 220 պատգամավորներից բացի, խորհրդարանի նիստերին ի պաշտոնե մասնակցելու էին պետական, եկեղեցական, ազգային, ուսումնակրթական, հրատարակչական, մշակութային և զինվորական վերին դասերի ներկայացուցիչներ: Այդպիսով Ընդհանուր ժողովի մասնակից անդամների թիվը կարող էր հասնել մինչև **400**-ի, թեև նրանք պաշտոնապես ընտրված պատգամավորներ չէին, այլ **անդամակիցներ**: Նաև սահմանվում էր, որ Ընդհանուր ժողովի նիստ հնարավոր է հրավիրել ընտրված երեսփոխաններից նվազագույնը 111-ի ներկայության դեպքում⁵⁸: Իսկ 1863 թ. տարբերակում ոչ մի խոսք չկա Ազգային ընդհանուր ժողովի ընտրություններին և խորհրդարանի նիստերին նման թվաքանակով անդամակից ներկայացուցիչների մասնակցության վերաբերյալ: Այստեղ այդ պահանջը հանված է: Մի դիտարկում ևս. քանի որ 1863 թ. սահմանադրությամբ պատգամավորների թիվը կրճատվում էր 60-ով, իսկ դրանում եկեղեցականների կշիռը՝ մի քանի անգամ, կարելի է հետևեցնել, որ կղերապահպանողական շրջանակներում սահմանադրությանը տրվել են բացասական որակումներ: Դրան հակառակ՝ հարկ է արձանագրել, որ Ազգային ընդհանուր ժողովում և ազգային մյուս կառույցներում աշխարհիկ տարրերի՝ նման գերակշիռ դիրք գրավելն ինքնին խոսում էր **հայ քաղաքական մտքի աշխարհիկացման** մասին:

Ինչ վերաբերում է 1863 թ. Ազգային սահմանադրության հայերեն և հայատառ թուրքերեն տեքստերին, ապա դրանց համեմատությունից

58 Տե՛ս «Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1860 թ.)», էջ 11:

դարձյալ նկատվում են որոշ տարբերություններ: Նախ արձանագրենք, որ երկուսն էլ հայոց պատրիարքարանի պաշտոնական հրատարակություններ են: Դրանց ամենաէական տարբերությունը, ինչպես արդեն ասվել է, այն էր, որ վերնագրերն իրար չէին համապատասխանում. մի դեպքում՝ «Ազգային Սահմանադրութիւն Հայոց», իսկ մյուսում՝ «Նիզամնամէի միլլէթի էրմէնիան» կամ թարգմանաբար՝ «Հայ ազգի կանոնադրություն»: Սակայն երկու տարբերակներն էլ համարվել են հավասարապես պաշտոնական ուժ ունեցող օրենք: Ավելին՝ Ազգային սահմանադրությունը «Հայոց Պատրիարքարանի Կանոնադրութիւն» վերտառությամբ ընդգրկվել էր օսմանյան պետական օրենքների ժողովածուի 2-րդ հատորում⁵⁹:

Ազգային սահմանադրության հայերեն և հայատառ թուրքերեն տարբերակների լեզվական տարբերություններից մյուսն այն է, որ միննույն հասկացության համար հայերեն տարբերակում գործածված են «երեսփոխան» և «պատգամավոր» բառերը, մինչդեռ թուրքերենում համապատասխան՝ «մէքուս» բառի փոխարեն գործածված է «միլլէթ վեքիլի» բնորոշումը, որը թարգմանաբար նշանակում է «ազգի փոխանորդ», իսկ առանձին դեպքերում հանդիպում է նաև «մէջլիսի ումումի ազաը» արտահայտությունը, որը թարգմանաբար նշանակում է «Ընդհանուր ժողովի անդամ»⁶⁰:

Հ. Շահրիկյանը, համեմատելով 1863 թ. սահմանադրության հայերեն և հայատառ թուրքերեն տեքստերը, նկատել է տալիս ևս մի քանի ոչ էական տարբերություններ: Այսպես՝ սահմանադրության 1-ին գլխի Ա ենթակետի «Պատրիարքի ընտրութիւն եւ հրաժարում» ձևակերպման թուրքերեն տարբերակում չկա «հրաժարում» բառը: Նույն գլխի Գ ենթակետում հայերեն «Ազգային Կրոնական ժողով» ձևակերպումից հայատառ թուրքերենում հանված է «ազգային» բառը, որը չկա նաև Ը ենթակետի «Ազգային Ընդհանուր ժողով» գլխագրում և այլն⁶¹: Բերվածից կարելի է հետևեցնել, որ տեքստի հայ թարգմանիչներն այն թուրքերենի վերածելու ժամանակ հավանաբար գիտակցաբար խուսափել են «**ազգային**» բառի գործածումից, այլապես թարգմանության ժամանակ վրիպում կարող էր լինել ամենաշատը մեկ-երկու դեպքում: Այսինքն՝ սահմանադրությունը թուրքերեն թարգմանողները խուսա-

59 Տե՛ս Ասո՛մ, Գ2Վ. աշխ., էջ 7:

60 Տե՛ս Սարոյճան Ա., Գ2Վ. աշխ., էջ 254:

61 Տե՛ս Ասո՛մ, Գ2Վ. աշխ., էջ 48-49:

փել են տեքստում գործածել թուրքական իշխանությունների համար անցանկալի քաղաքական իմաստ արտահայտող բառեր, հասկացություններ ու արտահայտություններ:

Այսպիսով՝ Ազգային սահմանադրության երկու՝ 1860 թ. և 1863 թ. տարբերակների պարզ համեմատությունը ցույց է տալիս, որ դրանց միջև իմաստային լուրջ տարբերություններ չկային: Եթե մի կողմ թողնենք պատգամավորների թվի 60-ով պակաս լինելը, բովանդակային և իրավական առումով 1863 թ. տարբերակը ստացել էր ավելի հստակ ձևակերպում: Միաժամանակ հարկ է ընդգծել, որ դրանում պատրիարքի իշխանությունը նվազեցվել էր հոգուտ աշխարհիկի:

5. Ազգային ընդհանուր ժողովի կառուցվածքը, ընտրություններն ու գործունեությունը

Բարձր Դռան վավերացրած Ազգային սահմանադրության համաձայն՝ բարձրագույն օրենսդիր մարմինը **Ազգային** (երեսփոխանական) **ընդհանուր ժողովն** էր, որը հանդիսանում էր միջնորդ Բարձր Դռան (սուլթանական կառավարության) և հայ ազգի միջև:

Ազգային սահմանադրությամբ դեռ 1840-ական թվականներից հայտնի Գերագույն ժողովն անվանափոխվեց **Ազգային կենտրոնական վարչություն**, որը գործադիր մարմինն էր: Դրան կից ձևավորվեցին նաև **Կրոնական** և **Քաղաքական** ժողովները⁶²: Ազգային սահմանադրության հիմնական սկզբունքների **Գ** ենթակետով արձանագրվում էր, որ թուրքահայոց ներքին գործերի տնօրինությունը օսմանյան տերության հատուկ արտոնությամբ և սահմանադրությամբ իրականացնելու է **Ազգային կենտրոնական վարչությունը**⁶³: Այն պիտի ունենար համապատասխան գործառնական (գործադիր) իրավասություններ⁶⁴, այլ խոսքով՝ օրենքով գործադիր իշխանության իրականացնողը Կենտրոնական վարչությունն էր: Ընդ որում, Կենտրոնական վարչության՝ իբրև կառավարչական մարմնի անդամները պետք է ընտրություններով անցած երեսփոխաններ (պատգամավորներ) լինեին⁶⁵: Ազգային սահմանադրությամբ անրագրված էր, որ

62 Տե՛ս նույն տեղում, էջ 31-34:

63 Տե՛ս Սարուխան Ա., նշվ. աշխ., էջ 24:

64 Տե՛ս Կոստանյան Է., Սկրտիչ Խրիմյան, Եր., «Զանգակ-97» հրատ., 2000, էջ 155:

65 Տե՛ս Ատոմ, նշվ. աշխ., էջ 40:

Կենտրոնական վարչությունը՝ իբրև գործադիր իշխանության մարմին, առաջնորդվելու է իրավունքի և պարտականության միասնության սկզբունքով՝ ապահովելու արդարությունն ու օրինականությունը⁶⁶: Կրոնական և Քաղաքական ժողովները ևս ունենալու էին իրենց վարչությունները: Դրանք իրավասու էին առաջադրելու թափուր մնացած պատրիարքական այթոռի տեղապահի թեկնածությունը և ապա նաև անցկացնել տալու նրա ընտրությունը և այլն:

Ազգային սահմանադրության 1-ին գլխի 1-ին հոդվածը սահմանում էր Ազգային ընդհանուր ժողովի նախագահի կարգավիճակը, որն ամենաբարձր պաշտոնն էր, և Ընդհանուր ժողովում ընտրված Կ. Պոլսի հայոց պատրիարքն ի պաշտոնն միաժամանակ դառնում էր նաև Ազգային ժողովի նախագահ⁶⁷: Սուլթանական կառավարության կողմից հաստատված 1863 թ. վերջնական տարբերակում **պատրիարքի իշխանությունը**, եկեղեցու և հոգևորականության դերը, ինչպես ասվեց, էապես սահմանափակվում էին: Քանի որ Ազգային ընդհանուր ժողովում աշխարհիկ պատգամավորները մեծապես գերակշռելու էին, ուստի պատրիարքի ընտրության, օրակարգային ու ընթացիկ հարցերի քննարկման և որոշումների ընդունման ժամանակ մեծանալու էր նրանց դերակատարությունը, ինչի մասին հուշում էին նաև մշակված հոդվածները:

Պատրիարքը թեև միաժամանակ Ազգային ժողովի նախագահն էր, սակայն նրա գործադիր իրավասությունները սահմանափակված էին, և նրա պաշտոնը, կարելի է ասել, կրում էր ավելի շատ արարողակարգային բնույթ: Այդ սահմանափակումներն արտացոլված են սահմանադրության մի շարք հոդվածներում՝ 8-11-րդ⁶⁸: Այսպես Ազգային ընդհանուր ժողովի նախագահին, նույն է թե՛ պատրիարքին ուղղված գործերը նա պիտի հանձնե՞ր պատկան՝ Կրոնական և Քաղաքական ժողովներին: Կամ թե՛ պատրիարքի որևէ «թաքրիք» (գանգատ, խնդրագիր) կամ այլ պաշտոնական գրություն վավերական և գործադրելի չէր, եթե այն չէր ստացել պատկան ժողովի գրավոր համաձայնությունը⁶⁹: Պատրիարքը պարտավոր էր ընթացք տալ իրավասու ժողովների բոլոր որոշումներին: Եվ վերջապես, նա չէր կարող

66 Տե՛ս **Սարուխան Ա.**, նշվ. աշխ., էջ 26:

67 Տե՛ս նույն տեղում, էջ 28:

68 Տե՛ս **Ասրոմ**, նշվ. աշխ., էջ 51:

69 Տե՛ս **Սիմոնյան Հ.**, Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք 3, էջ 1016:

լուծարել որևէ ժողով կամ խորհուրդ կամ չեղյալ համարել դրանց որոշումները⁷⁰: Փաստենք, որ պատրիարքին վերաբերող այդ հոդվածական պահանջները 1860 թ. և 1863 թ. տարբերակներում աննշան տարբերություններ ունեն:

Այսպիսով՝ ասվածից կարելի է հետևություն անել, որ եղել է հիմնականում սահմանադրական երկրներին բնորոշ՝ **Ազգային ընդհանուր ժողովի** նախագահ-պատրիարքի՝ իբրև օրենսդիր մարմնի ղեկավարի և **Ազգային կենտրոնական վարչության**՝ իբրև գործադիր մարմնի իրավասությունների **տարանջատում**: Հավելենք, որ, համաձայն սահմանադրության 11-րդ հոդվածի, Կենտրոնական վարչությունն ընտրվում էր Ընդհանուր ժողովի կողմից, ուստի և հաշվետու էր նրան⁷¹:

Արձանագրենք, որ 1863 թ. սահմանադրությամբ անցկացված երեսփոխանական ընտրություններից հետո Ազգային ընդհանուր ժողովի հանդիսավոր բացումն ու առաջին նիստը տեղի է ունեցել 1863 թ. սեպտեմբերի 20-ին: Նիստի ատենապետ է ընտրվել Ներսես եպս Վարժապետյանը, ձևավորվել է Ազգային ժողովի դիվանը (քարտուղարությունը)՝ իր դիվանադպիրներով, նորընտիր Ազգային կենտրոնական վարչությամբ և այլն:

Ազգային կենտրոնական վարչությունը գործադիր խառը մարմին էր՝ կազմված երկու՝ **Քաղաքական** և **Կրոնական** ժողովներից՝ իբրև համապատասխան գործերի տեսչական մարմիններ⁷²: Ընդ որում, Քաղաքական ժողովը՝ բաղկացած 20 աշխարհականներից, վարելու էր ազգային-քաղաքական (աշխարհիկ) գործերը (հոդված 36), իսկ Կրոնականը՝ կազմված 14 եկեղեցականներից՝ հոգևորկրոնական: Ազգային ժողովն էր ընտրելու Քաղաքական և Կրոնական ժողովների անդամներին: Սահմանադրությամբ Կենտրոնական վարչությունը՝ իբրև գործադիր իշխանություն, ընթացիկ գործերը վարելու էր այդ ժողովների միջոցով (հոդված 24): Դրանք միանալով կազմելու էին **Խառը ժողովը**: Բացի այդ, ինչպես ժամանակակից խորհրդարանների դեպքում, հիմնվելու էին դատաստանական (իրավական), տնտեսական, ֆինանսական (ելմտական), ազգային տուրքերի, ուսումնական (կրթական), վանական և թաղական խոր-

70 Տե՛ս Ասոմ, նշվ. աշխ., էջ 51:

71 Տե՛ս նույն տեղում, էջ 52:

72 Տե՛ս Սարուխան Ա., նշվ. աշխ., էջ 238, «Յաւելուած», էջ 34, Ասոմ, նշվ. աշխ., էջ 34:

հուրդներ, ազգային-գավառական վարչություններ՝ ազգային հիվանդանոցի հոգաբարձության, կտակաց, պանդխտության և այլն⁷³, որոնք վարելու էին համապատասխան տեսչական ժողովները: Գավառներում գործելու էին գավառային վարչություններ: Տեղական հարցերը լուծելու և դրանց կատարումը վերահսկելու համար Կ. Պոլսում ստեղծվելու էին թաղային խորհուրդներ: Գավառների գործերը տնօրինելու էին ազգային-գավառական վարչությունները՝ տվյալ եկեղեցական թեմի առաջնորդի նախագահությամբ:

Ինչ վերաբերում է Ազգային ընդհանուր ժողովի պատգամավորների ընտրություններին, ապա դրանք անցկացվում էին Կ. Պոլսի թաղերում և գավառներում փակ՝ գաղտնի քվեարկությամբ: Ընտրելու իրավունք ունեին 25 տարին, իսկ ընտրվելու՝ 30 տարին լրացած, նախկինում չդատված անձինք: Պատգամավորներն ընտրվում էին 10 տարի ժամկետով՝ յուրաքանչյուր 2 տարին մեկ Ազգային ընդհանուր ժողովի կազմի 1/5-ով թարմացման, նորոգման (ռոտացիայի) պայմանով⁷⁴: 70-րդ հոդվածով սահմանվում էր, որ կարևոր չէ, թե ընտրվելիք պատգամավորները Կ. Պոլսի տվյալ թաղի բնակիչ են, թե արևմտահայ որևէ գավառի: Կ. Պոլսի որևէ թաղից կամ գավառից ընտրված երեսփոխաններն Ընդհանուր ժողովում ներկայացնում էին բովանդակ ազգը, ուստի և համարվում էին **ազգային երեսփոխաններ**:

Ազգային ժողովն ուներ իր սեփական ելմտացույցը (բյուջեն) կամ «Ազգային Կեդրոնական Մատուկը»: Իբրև օրինակ նշենք, որ 1879/1880 թթ. ֆինանսական տարվա հաստատված հասույթն ու ծախսը կազմել են 540 հազար դուրուշ (1 արծաթ մեջիթը 20 դուրուշ հաշվելով)⁷⁵: Ելմտացույցի հարցերով զբաղվում էր Քաղաքական ժողովը: Հասույթի գլխավոր աղբյուրներն էին ազգային տուրքը (վճարում էին աշխատանք և որոշակի շահույթ ունեցող հայ անհատները⁷⁶), առաջնորդական վիճակների, Կ. Պոլսի և եկեղեցիների տուրքերը, Աղթամարի ճանապարհորդների (գրոսաշրջության) առուծախքի գրասենյակի, նշանադրության, պսակադրության, դատական վճռի հասույթները, դրոշմատուրքը և այլն: 93-րդ հոդվածով գավառների

73 Տե՛ս **Սարուխան Ա.**, նշվ. աշխ., էջ 22-23, **Պարսամյան Վ., Հարությունյան Շ.**, նշվ. աշխ., էջ 174-175:

74 Տե՛ս <https://armhistory.do.am>, armenianreligion-am.armin.am (մուտք 21.01.23):

75 Տե՛ս «Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ», բացում 1879 ամին, միստ Բ, 18 մայիս, 1879, Կ. Պոլիս, «Ս. Սիբայէլեան» տպագրատուն, 1879, էջ 42-43-ին կից հաշվետու ներդիրը:

76 65-րդ հոդվածում սահմանվում էր, որ աշխարհական երեսփոխանների ընտրության կապակցությամբ ընտրողը տարեկան առնվազն 75 դուրուշ ընդհանուր տուրք պետք է վճարեր:

կողմից պատրիարքարանին տրվելիք տուրքի բաշխման և հավաքման եղանակը պետք է որոշեր Ազգային ընդհանուր ժողովը: Սա ևս վկայում էր ֆինանսական առումով պատրիարքարանի դերի ու կշռի նվազման մասին: **Փաստաթղթում չկան տվյալներ օսմանյան կառավարության կողմից հայոց ազգային կառույցներին ֆինանսական օգնության տրամադրման վերաբերյալ:**

Ազգային սահմանադրությամբ կամ կանոնադրությամբ սահմանված էին Ազգային ժողովի ընտրական կարգը, ժողովի նախագահության, նիստերի վարման, հարցերի քննարկման ու քվեարկությունների ընթացակարգը և այլն: Ազգային ընդհանուր ժողովը իրավասու էր ստեղծելու նախաքննիչ հանձնախումբ (հանձնաժողով)՝ լսելու և քննելու զանազան հարցեր, դրանց վերաբերյալ կազմելու և ներկայացնելու զեկուցագրեր, իսկ վերջնական վճիռը կայացնելու էր Ազգային ընդհանուր ժողովը փակ՝ գաղտնի քվեարկությամբ⁷⁷: Ազգային ընդհանուր ժողովը գումարվելու էր երկու տարին մեկ անգամ (նախկին տարբերակով՝ ամեն տարի)՝ տվյալ տարվա ապրիլի վերջերին, և տևելու էր երկու ամիս, իսկ եթե հանգամանքների հրամայականով արտահերթ նիստի հրավիրման անհրաժեշտություն ծագեր, ապա դրա համար պետք է լիներ Բարձր Դռան համաձայնությունը⁷⁸:

1863 թ. հաստատված Ազգային սահմանադրության 59-րդ հոդվածի համաձայն՝ կանոնավոր նիստ հրավիրելու համար պահանջվում էր 140 պատգամավորներից առնվազն 71-ի (70+1) ներկայությունը: Ինչ վերաբերում է Ազգային սահմանադրությունը փոփոխության ենթարկելու խնդրին, ապա վերջին՝ 99-րդ հոդվածը սահմանում էր, որ դրա սկզբունքներն անփոփոխելի են, իսկ խիստ անհրաժեշտության դեպքում այն կարող է փոփոխության ենթարկվել հաստատումից միայն 5 տարի անց⁷⁹:

Ազգային սահմանադրության քաջագիտակ հետազոտողներից Առաքել Սարուխանի գնահատմամբ՝ 1860 թ. և 1863 թ. սահմանադրություններում ընդհանուր առմամբ պահպանված էր «**սոյն ոգին** (ընդգծումը մերն է – Ա. Հ.), միայն այն տարբերությամբ, որ նորը՝

77 Տե՛ս Սարուխան Ա., նշվ. աշխ., էջ 36:

78 Տե՛ս նույն տեղում, էջ 251 և 78:

79 Տե՛ս նույն տեղում, էջ 44-45 և էջ 76, 104:

1863 թվականինն աւելի ամփոփ էր եւ աւելի գործնական կարգադրութիւններ էր բովանդակում»⁸⁰:

Արձանագրենք, որ տվյալներ կան նաև Ազգային սահմանադրության մշակման աշխատանքներին պոլսահայ մասոնների⁸¹ մասնակցության վերաբերյալ: Այսպես՝ հայ մասոնականության պատմությանը քաջագիտակ հետազոտող Ռուբեն Բերբերյանը (1873–1942) 1937 թ. «Հայրենիք» ամսագրի 5–9–րդ համարներում հրատարակված «Հայ մասոնները եւ «Սէր» օթեակը Պօլսոյ մէջ» հոդվածաշարում զարգացնում է այն միտքը, որ պոլսահայ մասոնական շարժումը ծնվեց որպես հակազդեցություն ավելի արմատական 1860 թ. Ազգային սահմանադրության ձանաչման հարցում սուլթանական կառավարության ստեղծած խոչընդոտներին⁸²:

6. Պատմագիտական գնահատականներ

Իր չափավորությամբ ու թերություններով հանդերձ՝ Ազգային սահմանադրությունն իրավաքաղաքական, հոգևոր-կրթական և այլ առումներով պետք է համարել էական առաջընթաց քայլ արևմտահայության կյանքում: Այն՝ իբրև իրավաքաղաքական փաստաթուղթ, իր նպաստն է բերել հայ ազգային **ինքնագիտակցության** վերելքի, **պետականության** գաղափարի արթնացման ու զարգացման գործում: Ակներև է, որ սահմանադրության՝ եվրոպական կրթություն ստացած հեղինակները՝ Ն. Ռուսինյանը, Գր. Օտյանը, Ն. Պայյանը, Ս. Վիչենյանը, Կ. Ութուճյանը քաջ ծանոթ են եղել «Որոգայթ փառաց» աշխատությանը: Արևմտահայ բանասեր և ազգային գործիչ, բժիշկ Վ. Թորգոմյանը հաղորդում է, որ Ս. Վիչենյանի եղբայրը Կալկաթայից Կ. Պոլիս էր բերել «Որոգայթ փառաց» գրքի մի օրինակ⁸³: Արևմտահայոց ազգային սահմանադրության առաջամարտիկներից էր նաև ա-

80 Նույն տեղում, էջ 25:

81 «Մասոն» (mason) լատիներեն բառացի նշանակում է «քարտաշ, որմնադիր» (տե՛ս **Սովսիսյան Ֆ.**, Մասոնները և Ամերիկյան հեղափոխությունը, հատ. 1, Եր., «Լուսակն», 2015, էջ 8):

82 Տե՛ս panarmenian.net/arm/details/209379/ (մուտք՝ 21.01.23), **Բերբերյան Ռ.**, Հայ մասոնները և «Սէր» օթեակը Պօլսոյ մէջ, «Հայրենիք», Պոսթըն, 1937, N 5 (173), մարտ, էջ 74: Ռ. Բերբերյանը Կ. Պոլսի մասոնական «Սէր» օթակի հայ անդամների շարքին է դատում Մ. Մամուրյանին, Հ. Սվաճյանին, Ս. Պեշիկթաշյանին, Կ. Ութուճյանին, Ար. Հեքիմյանին, Ստ. Փափազյանին, Ս. Թագվորյանին և ուրիշների (տե՛ս նույն տեղում, էջ 75):

83 Տե՛ս Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Վ. Թորգոմյանի ֆոնդ, գ. 44, էջ 3:

գատական-ժողովրդավար հրապարակախոս Մ. Մամուրյանը: Բայց նա ավելի ուշ հիասթափվեց ու հեռացավ սահմանադրական պայքարի թատերաբեմից⁸⁴:

Հայոց պետականության գաղափարի ժառանգորդականության դիտանկյունից կարելի է զուգահեռներ անցկացնել «Որոգայթ փառաց»-ի և Ազգային սահմանադրության միջև. եթե «Որոգայթ փառաց»-ում, թեկուզև հեռավոր Հնդկաստանում, խոսվում է հայոց **ինքնիշխան (սուվերեն) ժողովրդավարական պետության** ստեղծման մասին, ապա Ազգային սահմանադրության մեջ՝ օսմանյան պետության կազմում ազգային **ինքնավարության** հասնելու մասին, գուցե իբրև առաջին քայլ:

Արևմտաեվրոպական հեղափոխությունների ազդեցությամբ ստեղծված արևմտահայերի Ազգային սահմանադրության առանձին մտքեր ու դրույթներ ընդօրինակված էին ֆրանսիական սահմանադրությունից: Ազգային սահմանադրության նախնական տարբերակը, մինչ կվերանայվեր սուլթանական իշխանությունների կողմից, այնքան բովանդակալից ու արմատական է եղել, որ, կղերապահ-պանողական հոսանքի ամենավառ դեմքերից Հովհ. Չամուռձյանի (Տերոյենց) կարծիքով, դրա հեղինակները հավակնություն են ունեցել «պետություն ստեղծել պետության մեջ»⁸⁵: Այսինքն՝ արևմտահայության ճակատագրով մտահոգ մտավորականությունը փորձել է խաղաղ, սահմանադրական ճանապարհով հասնել անկախության, ինչը, կարծում ենք, օսմանյան բռնապետության պայմաններում այնքան էլ իրատեսական չէր:

Բայց և այնպես, որքան էլ նշավակենք այս փաստաթղթի՝ շատ կողմերով ձևական, անորոշ և ոչ գործուն լինելը, այդուհանդերձ, դրանում արևմտահայության համար հոգևոր-մշակութային առումով սահմանվում էր **էքստերիտորիալ** ինքնորոշման իրավունք: Այն նրա **ներքին կյանքը**, ազգային, կրոնական, կրթամշակութային և այլ գործեր կանոնակարգող մի կանոնադրություն էր, իր ժամանակի ու պայմանների համար նոր երևույթ և առաջընթաց քայլ: Հ. Շահրիկյանի բնութագրմամբ՝ «Սահմանադրութիւն կոչուած օրէնքը կրօնական կամ

84 Տե՛ս **Ղազարյան Հ.**, Մ. Մամուրյանի հասարակական-քաղաքական հայացքները 1860-1870-ական թվականներին, «Տեղեկագիր», Եր., 1957, N 3, էջ 96-97:

85 Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, Նալբանդյանը և նրա ժամանակը, գ. 1, Եր., 1955, էջ 387, **Ասոմ**, նշվ. աշխ., էջ 7, **Ալպոյաճեան Ա.**, Ազգային Սահմանադրութիւնը, իր ծագումը և կիրառութիւնը, Կ. Պօլիս, 1910, էջ 120, 406:

եկեղեցական առանձնաշնորհում մը չէ՞ր, այլ զուտ ներքին ինքնավարութեան բնական իրաւունք»⁸⁶: Նա հայության համար ներքին ինքնավարական օրենքը համարում էր «դարերու ընթացքին հայ ժողովրդի նուաճած բնական իրաւունքներու նուիրագործում»⁸⁷: Իսկ Ա. Ալպոյաձյանի դիտարկմամբ՝ այդ փաստաթուղթն ավելի մեծ հնարավորություն էր տալիս Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին, պահպանողական շրջանակներին կառավարելու հայ համայնքները⁸⁸: Արդարև, կարելի է ասել, որ Ազգային սահմանադրությունը շոշափելի հետք թողեց ազգային ինքնագիտակցության աճի ու ժողովրդավարական գաղափարների արմատավորման գործում:

Մյուս կողմից, եթե զուգահեռներ ենք անցկացնում արևմտահայերի 1863 թ. սահմանադրության և ավելի վաղ՝ 1836 թ. մարտի 11-ին, ռուսահայ իրականության մեջ Նիկոլայ 1-ին կայսեր ստորագրած հայ եկեղեցու **կանոնադրության («Պոլոժենիե»)** միջև, որով Մայր Աթոռը փաստորեն գրկվում էր մինչ այդ իր ունեցած շատ իրավասություններից, այդ թվում՝ քաղաքական բնույթի հարցերով զբաղվելուց, ակներև է դառնում արևմտահայ հոգևոր շրջանակների իրավունքների գերակայությունը արևելահայերի իրավունքների նկատմամբ գործառութային և այլ հարցերում: Օրինակ՝ անժխտելի է, թե Հայկական հարցի վաղ արծարծումների ժամանակ ինչպիսի ակտիվություն էր հանդես բերում Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը. չէ՞ որ Մ. Խրիմյանն էր գլխավորում պատրիարքարանի պատվիրակությունը Բեռլինի վեհաժողովում, իհարկե, դրանում չանտեսելով նաև Բարձր Դռան դավադիր ընթացքը:

Ա. Ալպոյաձյանը, համեմատելով 1836 թ. «Պոլոժենիեն» և արևմտահայերի 1860 և 1863 թթ. սահմանադրությունները, նշում էր, որ թեև երկու եկեղեցական օրենքները խմբագրվել էին համապատասխան կառավարությունների կողմից, սակայն «Ազգային Սահմանադրութեան բազմաթիւ տրամադրութիւնները շատ վաղեմի ծագում մը ունին եւ օրէնքով նուիրագործում մը միայն ստացած են Ազգային Սահմանադրութեամբ»⁸⁹: Ինչ վերաբերում է Թուրքիայում Կ. Պոլսի հայոց պատրիարքի ունեցած կարգավիճակի հարցին, ապա հայ հա-

86 Ատոմ, նշվ. աշխ., էջ Բ:

87 Նույն տեղում, էջ 11:

88 Տես Ալպոյաձեան Ա., Ազգային Սահմանադրութիւնը, իր ծագումը և կիրառութիւնը, էջ 120:

89 Ալպոյաձեան Ա., Հայ Եկեղեցիին Սահմանադրութեան հարցը, էջ 3:

մայնքին ավելի կենտրոնացված վերահսկելու և կառավարելու համար սուլթանական կառավարությունը, Կիլիկիայի ու Ադրբայջանի կաթողիկոսական և Երուսաղեմի պատրիարքական աթոռների համեմատ, նրան տվել էր ավելի բարձր (գերադաս) կարգավիճակ⁹⁰: Միաժամանակ սուլթանական կառավարությունը ձգտել է արևմտահայությանը հեռու պահելու հայոց հոգևոր առաջնորդի՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի ազդեցությունից, քանզի դրանում տեսնում էր ժողովրդի քաղաքական կողմնորոշումների խնդիր:

Ա. Սարուխանի դիտարկմամբ՝ Ազգային սահմանադրության գործադրմամբ թուրքահայերը կես դարից ավելի վարել են իրենց ներքին ազգային, կրոնական, կրթական բոլոր գործերը: Հետագոտողը համարձակություն է ունեցել օսմանյան կառավարության հաստատած այս պետական օրենքը համարելու «հայկական ազգային ինքնավարութեան օրէնք»⁹¹ և փորձել է Ազգային սահմանադրությունը շաղկապել 1870-ական թթ. կեսերից մեծ մասամբ հայ գործիչների ջանքերով արծարծված ու ասպարեզ իջած Հայկական խնդրի հետ: Դրանով նա աշխատել է **ազգային, բայց ոչ տարածքային** պահանջի գաղափարը քաղաքականապես հասունացնելով դրան տալ **տարածքային (territorial) ինքնավարության** բնույթ⁹²: Սարուխանն այս երկու խնդիրները դիտարկում էր միասնության մեջ. «...մէկը ծնունդ է տուած միւսին»⁹³: Ուստի պատահական չէ, որ նրա արժեքավոր մենագրության մեջ Հայկական հարցը և Ազգային սահմանադրությունը՝ իբրև ուսումնասիրության նյութ, դարձել են մեկ ընդհանուր վերնագիր: Ինչևէ, անժխտելի է Ազգային սահմանադրության ունեցած դերը հայ ազգային ինքնագիտակցության վերածննդն ու պետականության գաղափարի սաղմնավորման գործում: Այդ առնչությամբ օտարերկրյա որոշ հեղինակներ արձանագրում էին հայերի քաղաքական գիտակցության ուժեղացումը, հատկապես այն, որ սահմանադրությունն արևմտահայ համայնքը **կրոնականից** սկսեց վերածել **քաղաքականի**⁹⁴:

90 Տե՛ս նույն տեղում, էջ 4:

91 **Սարուխան Ա.**, նշվ. աշխ., էջ Բ:

92 Տե՛ս նույն տեղում, էջ Բ:

93 Նույն տեղում:

94 Տե՛ս «Германские источники о геноциде армян», т. 1, Ер., изд. «Айастан», 1991, էջ 171:

7. Վերջաբանի փոխարեն

Այսպիսով՝ արևմտահայոց Ազգային սահմանադրությունը պետք է դիտել որպես հայ քաղաքական մտքի ուշագրավ թռիչք, ազգային-մշակութային ներքին **ինքնավարության** մի դրսևորում, որը հեռանկարում պիտի ունենար քաղաքական ինքնավարության, իսկ վերջին հաշվով՝ ինքնիշխանության ու անկախության նպատակը: Բայց, դժբախտաբար, հետագա զարգացումներն այլ ընթացք ու վախճան ունեցան: Մ. Վարանդյանի դիտարկմամբ՝ Ազգային սահմանադրության ընձեռած կրթթամշակութային հնարավորությունները, ինչ խոսք, խթանեցին «հայ ազգային ինքնագիտակցությունը, որ նախերգանք էր ազատագրական շարժումի»⁹⁵: Ազգային սահմանադրությունը հետագա տասնամյակների ընթացքում արթնացրեց միասնական ազգի ու **պետության գաղափարը** և նոր մակարդակի հասցրեց հայ իրավաքաղաքական միտքը:

Ազգային սահմանադրության հետ ժողովուրդն այնպիսի հույսեր է կապել, որ այն արտացոլվել է նաև գեղարվեստական գրականության մեջ: Ահա մի քառյակ սահմանադրությանը նվիրված Հարություն Սվաճյանի «Արիք Հայկազուն» հիմնից.

**Արի՛ք Հայկազունք, առաջ ընթանանք,
Սահմանադրութեան նոր բարև մ'ալ տանք:
Որ ազգ երբ զԱնի փրկարար կոչեց,
Նո՛ր հոգի, նո՛ր կեանք Անոր պարգևեց**⁹⁶:

Իսկ Լեոն նշում էր, որ «Կ. Պոլսի ժողովուրդը ամեն տարի **մայիսին** (նկատի է առնված մայիսի 24-ը – Ա. Հ.) տոնում էր այդ ինքնավարության տարեդարձը, երգվում էր «Արիք հայկազունք»-ը»⁹⁷:

Մյուս կողմից՝ չպետք է ընկնել ծայրահեղության մեջ, քանզի 19-րդ դարի երկրորդ կեսին արևմտահայության հիմնական զանգվածը շարունակում էր կրել օսմանյան բռնապետության սոցիալ-տնտեսական, ազգային-քաղաքական ու կրոնական հարստահարությունների ու նվաստացումների ծանր բեռը:

95 **Վարանդյան Մ.**, Հ. Յ. Ղաջնակցութեան պատմութիւն, հատ. 1, Փարիզ, 1932, էջ 18:

96 **Մխիթարյան Մ.**, Մի անտիպ փաստաթուղթ ցարական գրաքննության արխիվից, «Պատմաբանասիրական հանդես», 1966, N 2, էջ 144:

97 **Լեո**, Երկերի ժողովածու, հատ. 6, էջ 513:

Արևմտահայոց սահմանադրական շարժման կապակցությամբ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ բուն Արևմտահայաստանի նահանգների հայությունը գործնականում շարունակում էր մնալ իրավագուրկ և բոլոր առումներով անպաշտպան: Ի լրումն դրա՝ չպետք է մոռացության մատնել պատրիարք **Մկրտիչ եպս Խրիմյանի** պատկերած «Հայգոյժ»-ի ու «Վանգոյժ»-ի սարսափները, Վանի մեծ հրդեհը, արևմտահայության աղետալի վիճակը պատկերող գավառական հարստահարությունների վերաբերյալ փաստավավերագիր տեղեկագրերն ու ժողովածուները, Ազգային ժողովի պաշտոնական արձանագրությունները՝ «Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ», «Դիւան Հայոց պատմութեան» բազմահատորյակի տեղեկագրերը, որոնք իրար հաջորդած հայրենասեր պատրիարքների թափած ջանքերով ներկայացվում էին օսմանյան կառավարությանը:

Ավելին՝ ժամանակ առ ժամանակ Ազգային ժողովի ամբիոնից լսվում էր գավառահայ ժողովրդի աղեկտուր ձայնը թուրք-քրդական հարստահարությունների ու կամայականությունների մասին: Այդ առումով հայտնի են հայկական գավառներով շրջագայած բելգիացի իրավաբան Գ. Ռոլեն-ժեքմենի խոսքերը՝ թեև կար Ազգային սահմանադրությունը, սակայն չկար երաշխիք, որի վրա հայը կկարողանար հենվել, որպեսզի քուրդը չխլեր նրա ոչխարները, բեյը չբռնաբարեր նրա աղջիկներին ու չկողոպտեր նրա ունեցվածքը, կամ հարկահանը մի քանի անգամ չպահանջեր միևնույն հարկը և այլն⁹⁸: Այլ խոսքով՝ չկար որևէ երաշխիք, որ թուրքական կառավարությունը պարտավորություն կստանձներ ապահովելու իր հպատակների անվտանգությունն ու կյանքը՝ կանխելով կամ օրենքով պատժելով ցանկացած անօրինական արարք, բռնություն ու կամայականություն: Հայտնի էր, որ դատարանում տաճկահայ գեղջուկի վկայությունն իրավական ուժ չուներ, հպատակ հայը՝ իբրև գյավուր (անհավատ) և ռայա (իրավագուրկ հպատակ), զենք կրելու իրավունք չուներ, հայերի համար չկային կյանքի, գույքի, պատվի, իրավունքների ապահովման երաշխիքներ և այլն:

Արդեն թանգլիմաթյան դարաշրջանի վերջնափուլում՝ 1870-ական թթ. կեսերին, բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարի ընդլայնման պայմաններում ասպարեզ եկան, այսպես կոչված, «նոր

98 Տե՛ս Գուստ Բոլեն-Ջեքմեն Մ., Армения, армяне и трактаты, «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году», М., изд. тип. «Рассвет», 1896, էջ 19:

օսմանները»։ Նրանց գաղափարախոս Միդհատ Ահմեդ փաշան կազմում է Օսմանյան կայսրության պատմության մեջ առաջին համապետական սահմանադրությունը, որում իր գործուն մասնակցությունն է ունեցել ճանաչված սահմանադրագետ Գր. Օտյանը⁹⁹։ 1876 թ. գարնանը նոր օսմանների կազմակերպած պալատական հեղաշրջմամբ սուլթան Աբդուլ Ազիզը գահին կեց է արվում ու ինքնասպան լինում։ Սկզբում օսմանյան գահն անցնում է Մեհմեդ Մուրադ 5-րդին, սակայն մի քանի ամիս անց սուլթանական աթոռը գրավում է նրա եղբայր Աբդուլ Համիդ 2-րդը։ Նրա ավելի քան երեք տասնամյակների (1876–1909 թթ.) ջարդարարական քաղաքականության համար այդ ժամանակաշրջանը պիտի ստանար **Զուլումի դարաշրջան** անվանումը, իսկ ինքն էլ՝ **Կարմիր սուլթան** մականունը։

Իբրև թանգիմայան շարժման շարունակություն՝ **1876 թ. դեկտեմբերի 23-ին** ընդունված սահմանադրությամբ Թուրքիան հռչակվեց սահմանադրական միապետություն։ Նոր օսմանների դեկավար Միդհատ փաշան ստանձնեց մեծ վեզիրի (վարչապետի) պաշտոնը, և երկրում թվում է, թե բարեփոխումների փորձեր արվեցին։

Մյուս կողմից՝ 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի շրջանում արևմտահայերը, այդ թվում՝ Ազգային ժողովի երեսփոխանները, ոգևորված էին ռուսական զենքի հաջողություններով։ Մի խումբ երեսփոխաններ Ղալաթիո Կեդրոնական վարժարանում գումարեցին ոչ պաշտոնական մի խորհրդակցություն և որոշեցին հայկական դատը ներկայացնել «յաղթական Ռուսաստանի բարեհայեցողութեանը»¹⁰⁰։ Այդ նպատակով դեռ Սան Ստեֆանոյի (նախնական) պայմանագրից առաջ նրանք մշակել էին Հայաստանին (Արևմտյան Հայաստանին) ինքնավարություն տալու մասին ծրագրային պահանջների մի չափավոր նախագիծ, որը պիտի հասցվեր Սբ Էջմիածին՝ կաթողիկոսին, բայց այն հետագա ռուս-թուրքական բանակցություններում ընթացք չստացավ¹⁰¹։

Ազգային ժողովը դեռ իր 1876 թ. դեկտեմբերի 10-ի նիստում «մեր ազգին իրաւանց պաշտպանութեան յանձնառութեամբ» միաձայն արտոնել էր Ներսես պատրիարքին, որ նա իր ջանքն անխափան «յառաջ

99 Տե՛ս Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք 3, էջ 504։

100 Սարուխան Ա., նշվ. աշխ., էջ 259։

101 Տե՛ս նոյն տեղում, էջ 349-350։

մղէ ամեն ուր որ հարկ լինի»¹⁰²: Արդեն ռուս-թուրքական պատերազմի շրջանում ու դրա ավարտից հետո Ազգային ժողովում «Հայոց խնդրով» քանիցս կազմակերպվել են քննարկում-լուսմներ, հարցի լուսաբանման նպատակով կազմվել են տեղեկագրեր, հղվել դիմումներ թե՛ Բարձր Դռանը և թե՛ եվրոպական տերություններին: Հայկական խնդրի առնչությամբ Ազգային ժողովը կազմել էր նախաքննիչ հանձնաժողով, երեսփոխաններն առաջադրել էին անհատական և խմբային հարցապնդումներ, անցկացվել էին լուսմներ արևմտահայ նահանգների գաղթականության խնդրով և այլն:

Ազգային ժողովն իր 1878 թ. երկրորդ նիստում լսել է պատրիարքի պատասխանը Բեռլինի դաշնագրի արդյունքների վերաբերյալ: Հատկանշական է, որ այդ առնչությամբ 20 երեսփոխանների խմբային հարցին պատրիարք Ն. Վարժապետյանը պատասխանել է հետևյալ խոսքով. «...երբ չես կրնար ընել ինչ որ կ'ուզես, պետք է ընես ինչ որ կրնաս»¹⁰³:

Ինչ վերաբերում է միդիատյան սահմանադրությանը, երբ Բեռլինի վեհաժողովում մեծ տերությունների քաղաքական աճպարարությունների հետևանքով Հայկական հարցը գործնականում մնաց օդից կախված, 1878 թ. այն պաշտոնապես չեղյալ համարվեց: Թուրքիայի այդ առաջին սահմանադրությունը, ինչպես հայտնի է, հետագայում պիտի վերակենդանանար երիտթուրքերի 1908 թ. հուլիսյան պետական հեղաշրջմամբ և հայ ժողովրդի համար թողած իր շատ ավելի ծանր հետևանքներով: Այնուամենայնիվ, Հայոց ազգային ժողովը ներքաղաքական բարդացող պայմաններում ընդհատումներով շարունակել է իր աշխատանքները: Արձանագրենք, որ հայ ազգային կուսակցությունների ասպարեզ գալով՝ նրանում սկսեցին երեսփոխանական տեղեր զբաղեցնել տարբեր կուսակցական խմբեր ու խմբակցություններ, որոնց միջկուսակցական բանակովի դաշտ էր դառնում նաև Ազգային ժողովը:

1908 թ. միդիատյան (օսմանյան) սահմանադրության վերակենդանացումից հետո Կ. Պոլսի հայոց պատրիարք Եղիշե արք. Դուրյանը փորձ արեց Ազգային սահմանադրության ոգով բարենորոգելու հայոց

102 «Ատենագրությունը Ազգային ժողովոյ», բացում 1878 ամին, միստ Ա, 2 յունիս 1878, Կ. Պոլիս, «Ս. Միքայելեան» տպագրատուն, 1878, էջ 10:

103 «Ատենագրությունը Ազգային ժողովոյ», բացում 1878 ամին, միստ Ե, 21 յուլիս (մ. տ. օգոստոսի 2), 1878, Կ. Պոլիս, «Ս. Միքայելեան» տպագրատուն, 1878, էջ 63:

եկեղեցին: Այդ նպատակով հոգևոր և աշխարհիկ ներկայացուցիչների մասնակցությամբ 1910 թ. հրավիրվեց Պոլսի Կեդրոնական եկեղեցական ժողովը՝ օսմանյան սահմանադրության «ոգով» նախապատրաստելու ապագա ազգային-եկեղեցական բարենորոգումների նոր նախագիծ: Դժբախտաբար, Ե. Դուրյանի պատրիարքական գահակալումը շատ կարճ տևեց: 1910 թ. նոյեմբերի 26-ին գումարված Ազգային երեսփոխանական ժողովը 38 կողմ և 8 դեմ ձայներով ընդունեց հիվանդ Եղիշե պատրիարքի հրաժարականը, իսկ 1911 թ. փետրվարին նա վախճանվեց, և նրա նախածեղծությունը միջազգային հարաբերությունների հետագա բարդացման հետևանքով մնաց անկատար¹⁰⁴: Այդուհանդերձ, արևմտահայերի Ազգային սահմանադրությունը և դրա իրավաօրենսդրական գլխավոր մարմին ազգային ժողովը գործեցին մինչև 1915 թվականը, երբ Ազգային ժողովի պատգամավորների և ազգային կառույցների անդամների մեծագույն մասը Մեծ եղեռնի զոհ դարձավ:

Այսպիսով՝ սահմանադրական շարժման հետևանքով ընդունված Ազգային սահմանադրություն-կանոնադրությունը նշանակալի առաջընթաց քայլ էր արևմտահայոց հասարակական կյանքում: Քաղաքական ու հոգևոր առումներով այն իր նպաստը պիտի բերեր հայ իրավաքաղաքական մտքի զարգացման, պետականության գաղափարի հետագա հասունացման ու բյուրեղացման գործում: Ազգային սահմանադրության մի շարք գաղափարներ, սկզբունքներ ու դրույթներ իրենց ձևակերպումն են ստացել մերօրյա հայկական սփյուռքի համայնքների հոգևոր ու աշխարհիկ կառույցների կանոնադրություններում: Ավելին՝ դրա շատ մտքեր, թեզեր ու ձևակերպումներ իրավահաջորդության ու պատմական ժառանգորդության հիմքով տեղ են գտել մեր օրերի ՀՀ Սահմանադրության մեջ:

Եվս մեկ արձանագրում. պետաիրավական առումով արևմտահայերի 1863 թ. սահմանադրությունը, չնայած իր խմբագրված, գրականության մեջ երբեմն հանդիպող «թլպատված»¹⁰⁵ վիճակին, այդուհանդերձ, սուլթանական կառավարության կողմից իրավաբանորեն հաստատված ու շուրջ վեց տասնամյակ պաշտոնապես գործողության մեջ եղած՝ օրենքի ուժ ունեցող իրավաբանական փաստաթուղթ էր:

104 Տե՛ս Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 64-65, Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք 4, Եր., ԵՊՀ հրատ., 2010, էջ 884-885:

105 «Հայոց պատմություն», հատ. 3, գիրք 1, էջ 370:

Արևմտահայերենով ասած՝ «անիկա հավաստում էր» արևմտահայ աշխարհիկ և հոգևոր հատվածների՝ Բարձր Դռան կողմից ճանաչման և նրանց կյանքի տարբեր ոլորտների բարենորոգմանն ուղղված քայլերի ձեռնարկման փաստը, ինչը ներկայիս դիտանկյունից ու չափումներով վկայում է արևմտահայության ազգային իրավունքների ճանաչման անհրաժեշտության մասին: Ներկայումս այդ իրավունքների հոգևոր պահանջատերն առաջին հերթին Մեծին Տանն Կիլիկիո կաթողիկոսությունն է և Կ. Պոլսի հայոց պատրիարքությունը:

Նկատի ունենալով 20-րդ դարասկզբին երիտթուրքական կառավարության՝ արևմտահայության հանդեպ իրականացրած մեծ ոճիրը՝ Մեծ եղեռնը, արևմտահայության հայրենագրկումը, նրա ունեցվածքի, սեփականության, մշակութային արժեքների կողոպուտը, յուրացումը կամ ոչնչացումը՝ հայության այդ հատվածի հետնորդ-ժառանգները իրենց հոգևոր և աշխարհիկ կառույցներով՝ կազմակերպություններով, հիմնարկություններով, միություններով և այլն, ունեն բոլոր հիմքերը՝ միջազգային իրավունքի նորմերով հարց բարձրացնելու և պահանջատեր լինելու իրենց քաղաքական, նյութական, հոգևոր ու բարոյական իրավունքների վերականգնմանը և կորուստների փոխհատուցմանը:

Մեզանից 160 տարի առաջ՝ 1863 թ. մարտի 17-ին, Թուրքիայի իշխանությունների կողմից պաշտոնապես վավերացված արևմտահայերի Ազգային սահմանադրությունը մեր ժողովրդի ամենասովոր հատվածի՝ արևմտահայության իրավունքների անժամանցելիության և մեր հայրենիքի մեծագույն մասի՝ Արևմտյան Հայաստանի բռնազավթման փաստի պետաիրավական վկայությունն է:

Համառոտ եզրակացություններ

Այսպիսով՝ 19-րդ դարի 30-50-ական թթ.՝ Օսմանյան Թուրքիայի պատմության մեջ «**Թանգիմաթի**» բարեփոխումների ժամանակաշրջան անվամբ հայտնի պատմական շրջափուլում, եվրոպական հեղափոխություններից ազդված ու ազատագրական գաղափարներով ոգևորված մի խումբ լուսավորյալ մտավորականներ, ելնելով արևմտահայության ծանր ու աղետալի կացությունից, ինչպես նաև օգտվելով դարակեսերին Թուրքիայի համար ստեղծված ռազմաքաղաքական բարդ իրավիճակից, սկիզբ են դնում սահմանադրական շարժմանը: Դրա հետևանքով տարիների ընթացքում մշակվում

և **1860 թ. մայիսի 24-ին** Ազգային ընդհանուր ժողովի կողմից ընդունվում, իսկ ավելի ուշ՝ տևական քննարկումներից, խմբագրում-կրճատումներից հետո, սուլթանական կառավարության (Բարձր Դռան) վավերացմանն է ներկայացվում արևմտահայության ազգային-հոգևոր կյանքի բարեփոխմանն ուղղված Ազգային սահմանադրություն կոչվող մի փաստաթուղթ, որը **1863 թ. մարտի 17-ին** հաստատվում է սուլթանական կառավարության կողմից և ստանում պետական օրենքի ուժ:

Արևմտահայ առաջադեմ հասարակական-քաղաքական շրջանակներն ակնկալում էին ազգային-հոգևոր ինքնավարության պահանջից անցում կատարել տարածքային (հողային) ինքնավարության պահանջին՝ հեռանկարում ունենալով Արևմտյան Հայաստանի անկախության տեսլականը, ինչը, անշուշտ, **արևմտահայության ազգային ինքնագիտակցության աճի** մասին էր վկայում: Ազգային սահմանադրության և դրա հիման վրա գործող բարձրագույն օրենսդիր մարմնի՝ Ազգային ընդհանուր ժողովի ավելի քան կեսդարյա գոյության ու գործունեության ընթացքում նկատելի դրական փոփոխություններ կատարվեցին արևմտահայության հասարակական, հոգևոր և կրթամշակութային կյանքի տարբեր ոլորտներում: Բայց, դժբախտաբար, սուլթանական բռնավարչակարգի պայմաններում հնարավոր չեղավ «Թանգիմարթի» և Ազգային սահմանադրության շատ դրույթներ կյանքի կոչել, քանզի դրանցում պաշտոնապես հրապարակված ժողովրդավարական բնույթ ունեցող շատ օրենքներ ու իրավական ակտեր խոր հակասության մեջ էին թուրքական իրականության հետ: Իսկ արդեն Առաջին աշխարհամարտի տարիներին գործնականում ամեն ինչ տակնուվրա եղավ ու արևմտահայության համար ողբերգական ավարտ ունեցավ:

Արարատ Մ. Հակոբյան – գիտական հետաքրքրությունների շրջանակում են հայ քաղաքական կուսակցությունների, Հայաստանի առաջին հանրապետության, 1920 թ. թուրք-հայկական պատերազմի, 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի, խորհրդային քաղաքական բռնաճնշումների, հայ պարբերական մամուլի պատմության հիմնահարցերը: Հեղինակ է 20 մենագրության, 12 անհատական և կոլեկտիվ ձեռնարկի և ուսումնամեթոդական աշխատանքի, ավելի քան 100 գիտական հոդվածի:

Էլ. huugե՝ ararathakobyan47@gmail.com

THE EVOLUTION OF THE IDEA OF STATEHOOD IN THE WESTERN ARMENIAN REALITY

On the Occasion of the 160th Anniversary of the Ratification of the National Constitution

Ararat M. Hakobyan

Doctor of Sciences in History

Key words – Constitution, National Assembly, Patriarch, Article 9, Sultan Abdul Mejid, Ratification, N. Rusinyan, High Door, 1860. May 24, 1863 March 17, Turkey, K. Polis, Province. elections, deputy, "Tanzimat".

The 30s-50s of the 19th century in the history of Ottoman Empire are known as "Tanzimat", the period of reforms. In that historical period, a group of enlightened Western Armenian intellectuals, influenced by European progressive revolutions and highly educated there, and inspired by liberating ideas, based on the difficult and disastrous situation of the Western Armenians, as well as taking advantage of the difficult external military-political situation created for Turkey in the middle, started the constitutional movement, as a result of which 1860 was developed over the years. On May 24, the National General Assembly after lengthy discussions, editing and reductions adopted a document called "National Constitution" aimed at improving the national-spiritual life of the Western Armenians, which was submitted to the Sultanate government (Bardzr Daran) for ratification, and finally on March 17, 1863, it is approved by the government and became a state law.

The Western Armenian progressive socio-political circles expected from the demand for national-spiritual autonomy, through the further maturation of national-political ideas, to make a further transition to territorial (land) autonomy, and in the future, having a vision of the independence of Western Armenia, which, of course, is a great factor in the growth of the Western Armenian national self-awareness. should be considered flight. Although the current National Constitution and some interruptions of the National General Assembly, which is the highest legislative body working on its basis, during the existence of more than half

a century, noticeable positive changes were made in many spheres of social, spiritual, educational and cultural life of the Western Armenians, but unfortunately, under the conditions of the Sultanate dictatorship, it was not possible to "Tanzimat" and to implement many provisions of the "National Constitution", because many laws and legal acts of a democratic nature officially published in them were in deep conflict with the reality of the empire itself. And already during the First World War, practically everything turned upside down and for the Western Armenians, at the hands of the Great Armenian Genocide, it had a tragic end.

Резюме

**РАЗВИТИЕ ИДЕИ ГОСУДАРСТВЕННОСТИ В
ЗАПАДНОАРМЯНСКОЙ ДЕЙСТВИТЕЛЬНОСТИ**
К 160-летию ратификации «Национальной конституции»

Арапат М. Акопян
Доктор ист. наук

Ключевые слова – Конституция, Национальное собрание, Патриарх, статья 9, Султан Абдул Меджид, ратификация, Н. Русинян, Высокая Порты, 24 мая 1860 г., 17 марта 1963 г., Турция, К. Полис, провинция, выборы, депутат, "Танзимат".

30-50-е годы 19-ого столетия в истории Османской империи известны как период реформ «Танзимата». В тот исторический период группа просвещенных западноармянских интеллектуалов, получивших образование в европейских странах и вдохновленных освободительными идеями революций конца 1840-х годов, осознавая бедственное положение западных армян и желая исправить его, а также учитывая трудную военно-политическую ситуацию Турции, положила начало конституционному движению. В результате этого, 24 мая 1860 г. Общее Национальное Собрание западных армян после продолжительных обсуждений, редактирования и сокращений приняло документ под названием «Национальная Конституция», в котором была представлена целая политическая программа, направленная на улучшение нацио-

4. “Azgayin Sahmanadrut‘iwn Hayots‘ (1860 t‘.)”, K. Pōlis, tp. “Y. Miwhēntisean”, 1860 (**In Armenian**).
5. “Germanskije istochniki o genocide armjan”, t. 1, Yer., izd. “Ajastan”, 1991 (**In Russian**).
6. “Hay zhoghovrdi patmut‘yun”, hat. 5, Yer., Hayk. SSR GA hrat., 1974 (**In Armenian**).
7. “Hayots‘ patmut‘yun”, hat. 3, girk‘ 1. Nor zhamanakashrjan (XVII dari yerkrord kes – XIX dari verj), Yer., “Zangak-97” hrat., 2010 (**In Armenian**).
8. “Meghu”, K. Pōlis, 20 mayisi 1860 t‘., N 98, 30 yunisi 1860 t‘., N 102 (**In Armenian**).
9. “Patmut‘iwn S.D. Hnch‘akean kusakts‘ut‘ean. 1887-1962”, hat. A, Pēyruť, tp. “Shirak”, 1962 (**In Armenian**).
10. “Sbornik dogovorov Rossii s drugimi gosudarstvami (1856-1917)”, pod red. **Je. A. Adamova**, M., Gospolitizdat, 1952 (**In Russian**).
11. **Alpōyachean A.**, Azgayin Sahmanadrut‘iwnē, ir tsagumē yew kirařut‘iwnē, K. Pōlis, 1910 (**In Armenian**).
12. **Alpōyachean A.**, Hay Yekeghets‘iin Sahmanadrut‘ean harts‘ē, Gahirē, “Nor astgh” tp., 1945 (**In Armenian**).
13. **Atom**, Azgayin Sahmanadrut‘iwnē, K. Pōlis, “Artsiw” zhogh. gravacharants‘i, 1914 (**In Armenian**).
14. **Awetik‘ean G., Siwrmelean Kh., Awgerean M.**, Nor bargirk‘ Haykazean lezui, hat. A, Yer., YEPH hrat., 1979 (**In Armenian**).
15. **Berberyān R.**, Hay masōnnerē yev “Sēr” ōt‘eakē Pōlsoy mēj, “Hayrenik”, Post‘ēn, 1937, N 5 (173), mart, ēj 74–85 (**In Armenian**).
16. **Ghazaryān H.**, Arevmtahayeri sots‘ial-ntesakan yev k‘aghak‘akan kats‘ut‘yunē 1800-1870 t‘t‘., Yer., Hayk. SSH GA hrat., 1967 (**In Armenian**).
17. **Ghazaryān H.**, M. Mamuryani hasarakakan-k‘aghak‘akan hayats‘k‘nerē 1860-1870-akan t‘vakannerin, “Teghekagir”, Yer., 1957, N 3, ēj 83–99 (**In Armenian**).
18. **Gustav Rolēn-Zhekmen M.**, Armenija, armjane i traktaty, “Polozhenije armjan v Turcii do vmeshatel‘stva derzhav v 1895 godu”, M., izd. tip. “Rassvet”, 1896 (**In Russian**).
19. **Hovhannisyān A.**, Nalbandyanē yev nra zhamanakē, g. 1, Yer., 1955 (**In Armenian**).
20. **Hovhannisyān N.**, Armenots‘idē chanach‘vats ts‘eghaspanut‘yun ē, Yer., 2010 (**In Armenian**).
21. **Khařatyan A.**, Arevmtahayeri azgayin sahmanadrut‘yunē (1860-1863 t‘t‘.), “Patmabanasirakan handes”, Yer., 1992, N 2-3, ēj 51–66 (**In Armenian**).
22. **Kostandyān Ē.**, Mkrťich‘ Khrimyan, Yer., “Zangak-97” hrat., 2000 (**In Armenian**).
23. **Leo**, Yerkeri zhoghovatsu, hat. 4, Yer., “Hayastan” hrat., 1984, hat. 6, Yer., “Hayastan” hrat., 1987 (**In Armenian**).
24. **Matenadaran**, M. Izmirlyani arkhiv, t‘ght‘. 14, vav. 614 (**In Armenian**).
25. **Mkhit‘aryān M.**, Mi antip p‘astat‘ught‘ ts‘arakan grak‘nnut‘yan arkhivits‘, “Patmabanasirakan handes”, Yer., 1966, N 2, ēj 131–146 (**In Armenian**).
26. **Movsisyān F.**, Masonnerē yev Amerikyan heghap‘okhut‘yunē, hat. 1, Yer., “Lusakn”, 2015 (**In Armenian**).
27. **Nazaryants‘ St.**, Yerker, Yer., 1987 (**In Armenian**).
28. **Ōrmanēan M.**, Azgapatum, hat. G, Pēyruť, tp. “Sewan”, 1961 (**In Armenian**).
29. **Palasanean St.**, Patmut‘iwn Hayots‘ (skzbits‘ minch‘ew mer ōrerē), T‘iflis, 1895 (**In Armenian**).
30. **Parsamyān V., Harut‘yunyan Sh.**, Hay zhoghovrdi patmut‘yun (1801-1978 t‘t‘.), Yer., “Luis” hrat., 1979 (**In Armenian**).

31. **Parsamyan V.**, Hay azatagrakan sharzhumneri patmut'yunits', Yer., Haypethrat, 1958 (**In Armenian**).
32. **Pērpērean A.**, Patmut'iwn Hayots' (skseal i 1772 amē p'rkch'in minch'ew Yamn 1860), K. Pōlis, tp. "Pōghosi K'irishchean yev ěnk.", 1871 (**In Armenian**).
33. **Sarukhan A.**, Haykakan khndirē yev Azgayin sahmanadrut'yunē T'urk'iyayum (1860-1910), hat. A, T'iflis, tp. "Ēpōkha", 1912 (**In Armenian**).
34. **Simonyan H.**, Azatagrakan payk'ari ughinerum, girk' 3, Yer., YEPH hrat., 2009, girk' 4, Yer., YEPH hrat., 2010 (**In Armenian**).
35. **Siruni H.**, T'anziimat' yev hayer (Bukharest), "Patma-banasirakan handes", Yer., 1966, N 4 (35), ěj 52–66 (**In Armenian**).
36. **T'op'uzyan H.**, Siriayi yev Libanani hay gagh't'ojakhi patmut'yun (1841-1946 t't'), Yer., 1986 (**In Armenian**).
37. **Varandean M.**, H. Y. Dashnakts'ut'ean patmut'iwn, hat. 1, P'ariz, "Yusaber", 1932 (**In Armenian**).
38. Ye. Ch'arents'i anvan grakanut'yan yev arvesti t'angaran (GAT'), V. T'orgomyani fond, g. 44 (**In Armenian**).
39. **Yeghoyan A.**, Libananē Mut'asarifut'yan shrjanum (1861-1915 t't'), seghmagir, Yer., 2014 (**In Armenian**).